

15798

Պրոլետարները ընդդեմ յերկիրներին, միացե՛ք

Ա. ՍՏԵՑԿԻ

ԴԱՍԱԿԱՐԳԵՐԻ
ՎԵՐԱՑՈՒՄԸ
ԽՍՀՄ - ՈՒՄ

321.8

Կ-88

ԽՍՀՄ ՍՂՐԱՏ • 1936 • ՅԵՐԵՎԱՆ

DEC 2009
26 SEP 2006

321.3
U-88

ub

Պրոլետարներ ըլոր յերկրների, միացե՛ք

Ա. ՍՏԵՑԿԻ

ՌԱՍԱԿԱՐԳԵՐԻ
ՎԵՐԱՑՈՒՄԸ
ԽՍՀՄ - ՈՒՄ

3305

ՀԱՅԿՈՒՍԿՐԱՏ • 1936 • ՅԵՐԵՎԱՆ



1202
37

А. СТЕЦКИЙ
О ЛИКВИДАЦИИ КЛАССОВ В СССР
Армпартиздат, Эривань

Ամերիկյան «Սկրիպս-Հոուարդ Նյուս Փեյփերս» լրագրա-
յին վիճվորման նախագահ պարոն Ռոյ Հոուարդի հետ ու-
նեցած զրույցի ժամանակ ընկեր Ստալինը տալով խորհրդային
կարգերի բնութագիրը, ասաց.

«Մեր հասարակությունը բաղկացած է բացառապես քա-
ղաքի ու գյուղի ազատ աշխատավորներից—բանվորներից,
գյուղացիներից, ինտելիգենցիայից: Այդ խավերից յուրա-
քանչյուրը կարող է ունենալ իր հատուկ շահերը և արտա-
ցույել դրանք գոյություն ունեցող բազմաթիվ հասարակա-
կան կազմակերպությունների միջոցով: Բայց քանի վոր
դասակարգեր չկան, քանի վոր դասակարգերի սահմաննե-
րը ջնջվում են, քանի վոր սոցիալիստական հասարակու-
թյան տարբեր խավերի միջև մնում է միայն վորոշ, բայց վոչ ար-
մատական տարբերություն, չի կարող սննդատու հող լինել
իրար դեմ պայքարող կուսակցություններ ստեղծելու հա-
մար: Վորտեղ չկան մի քանի դասակարգեր, չեն կարող լի-
նել մի քանի կուսակցություններ, վորովհետև կուսակցու-
թյունը դասակարգի մի մասն է»:

Ընկեր Ստալինի այս խոսքերի մեջ արտացոլված է Խոր-
հրդային Միության բանվոր դասակարգի և մեր բողջիկյան կու-
սակցության հաղթանակների ամբողջ վեհությունը: Պրոլետարիա-
տի դիկտատուրայի նվաճումից հետո համաշխարհային-պատմա-
կան խնդիրը—անդասակարգ սոցիալիստական հասարակության
կառուցումը ԽՍՀՄ-ում— հիմնականում լուծված է:

ԽՍՀՄ-ում լիկվիդացիայի յե յենթարկված անտեսության

կապիտալիստական սիստեմը, վերացված և արտադրութեան միջոցների մասնավոր սեփականութիւնը և վոչնչացված և մարդու շահագործումը մարդու կողմից: ԽՍՀՄ-ի հասարակական կարգերի հիմքն է կազմում տնտեսութեան սոցիալիստական սիստեմը և արտադրութեան գործիքների ու միջոցների սոցիալիստական սեփականութիւնը: Խորհրդային Միութեան աշխատավոր մասսաների և բոլորիկյան կուսակցութեան առջև խնդիր է ծառանում—ամրապնդել և զարգացնել համառ պայքարով նվաճված սոցիալիստական հասարակարգը:

ԽՍՀՄ-ում սոցիալիստական հասարակարգն ամրապնդելու և ապագայում լիակատար կոմունիզմին անցնելու նախադրյալներ ստեղծելու համար մղվող պայքարում դեռ շատ բան է մնում անելու: Դեռ շատ ջանքեր են անհրաժեշտ սոցիալիստական հասարակութեան բոլոր մարդկանց աշխատանքային կարգապահութեան վոչո՞վ դաստիարակելու համար, աշխատանքի կուլտուրան և մասսաների ընդհանուր կուլտուրականութիւնը բարձրացնելու համար, ստախանովյան շարժումը տարածելու և ստախանովականների ռեկորդները մեր արդյունաբերութեան մեջ տարածելու համար, հանրային հարստութիւնը տասնապատկելու, տեխնիկական բազմապատկելու և ԽՍՀՄ-ն առատութեան յերկիր դարձնելու համար: Մենք դեռ պետք է իսպառ ջնջենք շահագործող դասակարգերի թափթփուկներին, վորոնք դեռ գոյութիւն ունեն և փորձում են մլաս հասցնել սոցիալիզմի գործին, գաղտագողի հարվածներ հասցնել մեզ:

Այս հետագա խնդիրները կապակցութեամբ անհրաժեշտ է ճիշտ հասկանալ դասակարգերի վերացման այն աստիճանի առանձնահատկութիւնները, վորին հասել ենք, այդ աստիճանի յուրահատկութիւնը, տեսնել այն, ինչ դեռ լրիվ արված չէ և ինչ անհրաժեշտ է անել ԽՍՀՄ-ում դասակարգերի վերացումն աւարտելու համար:

Դասակարգերի վոչնչացման հարցի ճիշտ ըմբռնումն այժմ խիստ կարևոր է, վորովհետև դասակարգերի վոչնչացման նվաճված աստիճանի վոչ-ճիշտ գնահատականն անխուսափելիորեն իր հետեւից բերում է վոչ-ճիշտ հետեւութիւններ, սխալներ՝ քաղաքական և գործնական աշխատանքում:

Վորոշ ընկերներ մետաֆիզիկական մոտեցում են յերևան բերում ԽՍՀՄ-ում դասակարգերի վերացման հարցի նկատմամբ: Մարքսը, Ենգելսը, Լենինը, Ստալինը միշտ ընդգծել են,

վոր կենդանի իրականութիւնը հակասական է և վոր բնութեան մեջ չկան հնի և նորի բոլորովին անջրպետված սահմաններ: Ճիշտ այնպես, ինչպես հնի մեջ գոյութիւն ունեն նորի սաղմերը, նույնպես էլ ծնունդ առնող նորի մեջ դեռ յերկար ժամանակ շարունակում են գոյութիւն ունենալ հնի բեկորները, մասնիկները: «Հնի մնացորդները նորի մեջ ցույց է տալիս մեզ կյանքն ամեն քայլափոխում, թե բնութեան մեջ, թե հասարակութեան մեջ»*—ասում է Լենինը: Դիալեկտիկական մոտեցումն իրականութեան նկատմամբ հենց այն է, վոր կարողանանք հինը և նորը իրենց փոխհարաբերութեան մեջ վերցնել այնպես, ինչպես այդ լինում է բուն կյանքում:

Մինչդեռ վորոշ ընկերներ հաճախ մետաֆիզիկորեն հարցը դնում են միայն հետեւյալ կերպ. կան արդոք մեզ մոտ դասակարգեր, թե վոչ: Վոմանք նույնքան հաճախ և նույնչափ մետաֆիզիկորեն սահմանափակվում են «այո» կամ «վոչ» պատասխանով: Յե՛վ ահա, մետաֆիզիկորեն, գոհկորեն գնելով ու լուծելով այդ հարցը, մեզ մոտ յերբեմն յեզրակացում են, թե ԽՍՀ Միութեան մեջ դասակարգերի վոչնչացման պրոցեսն աւարտված է իբր թե լրիվին ու ամբողջութեամբ, վոր արդեն չկան դասակարգային տարբերութիւնների վորեւէ մնացորդներ: Իսկ այստեղից բնականորեն սխալ հետեւութիւններ են արվում մի ամբողջ շարք այլ եյական հարցերում: Վորովհետև յեթե դասակարգերի վոչնչացման պրոցեսն արդեն աւարտված է լրիվին ու ամբողջութեամբ, յեթե Խորհրդային Միութեան մեջ արդեն չկան դասակարգային վորեւէ տարբերութիւններ, ապա պնդում են, թե մենք այլևս չպետք է խոսենք բանվորների ու գոյացիւնների մասին, վոր բանվոր դասակարգն արդեն բանվոր դասակարգ չէ, վոր, այնուհետև, իբր թե դրանով իսկ վերանում է բանվոր դասակարգի ավանգարդային, դեկավար դերի հարցը: Իսկ յեթե արդեն վերջացել է բանվոր դասակարգի ավանգարդային դերը, ապա վոմանք սկսում են մտածել,— իսկ ի՞նչ բան է այժմ մեր կոմունիստական կուսակցութիւնը, ի՞նչ է մեր պետութիւնը, հարկավոր է արդոք առհասարակ այդ պետութիւնը և մենք կարող ենք արդոք ասել, վոր այդ պետութիւնը, մեր խորհրդային պետութիւնը, անհրաժեշտ է մեզ:

Վորպետքի ճիշտ հասկանանք Խորհրդային Միութեան մեջ դասակարգերի վերացման դրութիւնը տվյալ հետապում և յու-

* Լենին, Յերկեր, հատ. XXI, էջ 438.

րացնենք ընկեր Ստալինի ասածները պարոն Ռոյ Հոուարդի հետ ունեցած զրույցի ժամանակ, հարկավոր է նախ և առաջ նախազգուշացնել այդ հարցը սխեմատիկորեն, վերացականորեն ղնելուց, այնպես, ինչպես յերբեմն պահանջում են մի քանի հետամնաց կուսակցականներ, վորոնք ասում են. «Դե, ասացեք, կան արդյոք մեզ մոտ դասակարգեր, թե չկան, այ՞ թե վ՞նչ»: Յեվ այսքան միայն:

Վորպեսզի ճիշտ հասկացվի ԽՍՀ Միության մեջ դասակարգերի վերացման հարցը, հարկավոր է այն պարզաբանել պատմական հեռանկարում—այն հսկայական աշխատանքի հեռանկարում, վոր բանվոր դասակարգը, աշխատավոր գյուղացիության հետ միասին, Լենինի—Ստալինի կուսակցության ղեկավարությամբ կատարել է սոցիալիստական հասարակության կառուցման համար մղվող պայքարում:

Այնուհետև պետք է հիշել, վոր յերբ մենք խոսում ենք Խորհրդային Միության մեջ դասակարգերի վերացման մասին, ապա խոսքը վերաբերում է 170 միլիոն բնակչություն ունեցող մի յերկրի, խոսքը վերաբերում է մի յերկրի, վորն ունի տնտեսական ու կուլտուրական պայմանների հսկայական, դեռևս վերջնական նապես չվերացված բազմազանություն, վորի մեջ կան ազգային բազմաթիվ առանձնահատկություններ: Խոսքը վերաբերում է մի յերկրի, վորտեղ դեռ վոչ այնքան հեռավոր անցյալում տիրապետում էին կապիտալիստները, վորտեղ մինչև հեղափոխությունն ուժեղ էին ձորատափրության մնացորդները, վորտեղ դեռ վոչ այնքան հեռու անցյալում գերակշռում էր մանր, բարբարոս կերպով հետամնաց գյուղացիական տնտեսությունը:

Աշխատանքի վիթխարի, համաշխարհային-պատմական մասշտաբը հասկանալու համար հարկավոր է նաև հիշել Մարքսի ու Ենգելսի խոսքերը, «Կոմունիստական մանիֆեստի» խոսքերը, թե՛ «ամբողջ նախընթաց հասարակության պատմությունը դասակարգերի պայքարի պատմություն է»:

Այն բանով, վոր մենք վճռական քայլեր կատարեցինք դասակարգերի վոչնչացման գործում, նրանով, վոր մենք ստեղծեցինք հասարակության սոցիալիստական կազմակերպություն և ընդմիջտ վոչնչացրինք մարդու շահագործումը մարդու կողմից, մենք վերջ դրինք մարդկության հին պատմությանը և բաց աբիսը նրա նոր պատմությունը:

Այդ պատճառով էլ մեր հեղափոխությունը կոչվում է Պրոլետարական սոցիալիստական մեծ հեղափոխություն: Հենց այդ

Պրոլետարական սոցիալիստական մեծ հեղափոխությունն էլ, պրոլետարական ղեկատուութայի նվաճումը, սկիզբն է հանդիսանում մեր յերկրում դասակարգերի վերացման:

Այդ համաշխարհային-պատմական խնդիրը — դասակարգերի վերացումը, մարդու կողմից մարդու շահագործման վոչնչացումը — արձանագրված է վ՞նչ միայն մեր բուլղարիկյան կուսակցության ծրագրի մեջ, այլ վորպես պրոլետարական պետության խնդիր քրի յեր առնված դեռ ՌՍՖՍՀ առաջին Սահմանադրության մեջ, վորն ընդունվել է ՌՍՖՍՀ խորհուրդների 5-րդ համագումարում 1918 թվականի կեսերին: Այդ որենքի մեջ, վորը վորոշում էր խորհրդային պետության կառուցվածքի հիմքերը, վորը վորոշում էր պետության նպատակներն ու խնդիրները և վորը վորոշում էր պետության նպատակներն ու խնդիրները և վորը վերել էյին Լենինն ու Ստալինը, պարզ ասված էր, թե խորհրդային նոր պետության Սահմանադրության հիմնական խնդիրն է.

«Քաղաքի ու գյուղի պրոլետարիատի և չքավորագույն գյուղացիության ղեկատուութայի հաստատումը հանձին հզոր համառուսաստանյան խորհրդային իշխանության, բուրժուազիային լիովին ճնշելու, մարդու կողմից մարդու շահագործումը վոչնչացնելու և սոցիալիզմ հաստատելու նպատակով, վորի ժամանակ չի լինի վ՞նչ դասակարգերի բաժանում, վ՞նչ պետական իշխանություն»:

Այսպիսով, մեր հեղափոխությունը հենց սկզբից իր առաջ դրել է ամբողջ հասարակության ղեկավարական, պլանաչափ, սոցիալիստական վերափոխման խնդիրը: Այդ խնդիրը, վորը կատարում էր պրոլետարական ղեկատուութայի պետությունը, վորն իրականացնում էր պրոլետարիատը՝ դաշն կնքած աշխատավոր գյուղացիության հետ, չափազանց բարդ խնդիր էր, և նրա լուծումը տեղի յեր ունենում պատմական վերին աստիճանի դժվարին պայմաններում:

Պրոլետարական ղեկատուութան այդ խնդրի լուծումն սկսեց փլուզման պայմաններում, այն պայմաններում, յերբ յերկիրը հյուժված ու քայքայված էր իմպերիալիստական պատերազմի հետևանքով: Նա այդ խնդրի լուծումն սկսեց տապալված շահագործող դասակարգերի կատաղի ընդդիմադրության պայմաններում, ըստ վորում այդ դասակարգերի ուժը չափազանց մեծ էր: Ռուսական բուրժուազիան սերտորեն կապված էր արտասահմանի իմպերիալիստական կապիտալի հետ — նրա ձեռքին էյին գտնու-

Շահագործող դասակարգերի վռնչացումը մեր յերկրում ընթացել է դասակարգային ամենակատարի կռվի պայմաններում: Լենինը բազմիցս մատնանշել է, վոր բուրժուազիայի տապալումը, նրա արտադրութայն միջոցների եքսպրոպրիացիան, նրան տիրապետող դիրքից զրկելը կտասնապատկի նրա ընդդիմադրությունը:

Մեր յերկրի բանվոր դասակարգն ու աշխատավոր գյուղացիությունը այդ բանն զգացել են փորձով, իրենց ուսերի վրա: Բուրժուազիան, կալվածատերերի հետ միասին, պայքարի ամենատուր, ամենավճռական միջոցների դիմեց պրոլետարիատի դիկտատուրայի դեմ. — նա քաղաքացիական պատերազմ կազմակերպեց Խորհրդային պետութայն դեմ, նա ոգնութայն կանչեց ոտարերկրյա կապիտալի բանակները, միացավ նրանց հետ, վորպեսզի ինտերվենցիայի ճանապարհով, խորհրդային յերկրի աշխատավոր մասսաների վրա զինված հարձակում գործելու ճանապարհով տապալեր պրոլետարիական դիկտատուրան, վերադարձներ փողի, բանկերի, ֆարերկանների ու գործարանների մասնավոր սեփականատիրությունը, բանվոր դասակարգին ու գյուղացիութայնը զրկեր նրանց նվաճումների պտուղներից և նորից նրանց վիզն անցկացներ կապիտալիստական ստրկութայն լուծը:

Հակահեղափոխական բուրժուազիայի դեմ մղվող այդ կռվում, վորը տեղի յեր ունենում վնչ միայն արտաքին ճակատներում, այլ վորն ուղեկցվում էր յերկրի ներսում պրոլետարիական դիկտատուրայի դեմ ուղղված դավադրություններով ու ապստամբություններով, մեր կուսակցությունն իր հերթին պետք է դիմեր դասակարգային կռվի վճռական, անողոք, հեղափոխական միջոցներ: Խորհրդային պետությունն ամենակարճ ժամանակամիջոցում, հենվելով աշխատավորների անձնագործ պաշտպանութայն վրա, ստեղծեց հզոր կարմիր բանակ, ինտերվենտների բանակներին, կալվածատերերի ու բուրժուազիայի բանակներին հակահարված տալու համար: Ստեղծվեցին պետական այնպիսի մարմիններ, ինչպես սարտատի ու հակահեղափոխութայն դեմ պայքարող արտակարգ հանձնաժողովները՝ բուրժուազիայի ընդդիմադրությունն ամբողջ ուժով և ամենայն խստությամբ ճնշելու և հակահեղափոխական կազմակերպությունները խորտակելու համար:

Դրան զուգընթաց, մեր կուսակցությունը լուծում էր նաև մի այլ խնդիր — վերջնականապես արմատախիլ անել բուրժուազիայի

տնտեսական հիւժքը, զրկել նրան այն տնտեսական միջոցներից, վորոնք նա դեռ անորինում էր և վորոնք նա ոգտագործում էր պրոլետարիական դիկտատուրայի դեմ: Այդ նպատակին էր ծառայում ռադմական կոմունիզմի քաղաքականությունը: Քաղաքացիական պատերազմի ժամանակ, ինչպես հայտնի յի, պատերազմի ծանր պայմանների հետևանքով, բոլոր միջոցները պաշտպանութայն համար մորիլիզացիայի յենթարկելու անհրաժեշտության հետևանքով, բուրժուազիայի կատարի ընդդիմադրության առկայության պայմաններում, և մասամբ այդ ընդդիմադրությունը ճնշելու նպատակով, անհրաժեշտ յեղավ կիրառել ռադմական կոմունիզմի քաղաքականությունը: Այդ քաղաքականությունը պրոլետարիական պետութայնը հնարավորություն տվեց ամենաուժեղ հարված հասցնել բուրժուազիային տնտեսական բնագավառում, քանի վոր ռադմական կոմունիզմի ժամանակ մասնավոր կապիտալիստական սեփականութայն ազգայնացումը, մասնավոր կապիտալիստական ձեռնարկություններին ազգայնացումը կատարվեց հետևողականորեն և մինչև վերջ:

Քաղաքացիական պատերազմը վերջացավ բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիութայն հաղթանակով իրենց թշնամիներին նկատմամբ: Քաղաքացիական պատերազմը վերջանալուց հետո մեր կուսակցությունը, Լենինի ղեկավարությամբ, ձեռնամուխ յեղավ գյուղացիութայն հետ ձիշտ տնտեսական փոխհարաբերություններ հաստատելու գործին, վորպեսզի տնտեսական մերձեցում հաստատվեր գյուղացիութայն հետ, վորպեսզի խաղաղ շինարարութայն և հետագայում սոցիալիզմին անցնելու պայմաններում ամրացվեր բանվոր դասակարգի դաշինքը գյուղացիութայն հետ՝ բանվորների ղեկավարությամբ:

Մեր կուսակցությունը, քաղաքացիական պատերազմը վերջանալուց հետո, վերադարձավ այն քաղաքականութայնը, վոր Լենինը նշել էր դեռ 1918 թվականի աշնանը, քաղաքականությունը, վորի նպատակն էր սոցիալիզմի կառուցումը այնպիսի մեթոդներով, այնպիսի յեղանակներով, վորոնք համապատասխանեյին բանվոր դասակարգի հաղթանակի ձեռք բերված աստիճանին:

Խորհրդային պետությունն իր ձեռքում կենտրոնացրեց արտադրութայն հիմնական միջոցները, խոշորագույն ձեռնարկությունները, տրանսպորտը, առևտրի հիմնական դիրքերը, բանկային գործը, ժողովրդական տնտեսութայն այդ բոլոր առաջատար, հրամանատարական բարձունքները պրոլետարիատի դիկտատուրայի ձեռքին էյին:

Մորհրդային պետությունը շրջանառություն վորոշ ազատու-
թյուն տվեց գյուղացիներին, վորպեսզի նախապես գյուղացիա-
կան տնտեսությունը բարձրացնեն ասպրանքային տնտեսության
այն մանր հիմքի վրա, վորի վրա նա գոյություն ունեն այն ժա-
մանակ:

Մորհրդային պետությունը թույլատրեց նաև վորոշ սահման-
ներում մասնավոր կապիտալը: Լենինն ասում է, թե անհրաժեշտ է,
վոր մենք վորոշ չափով ոգտագործենք նաև պետական կապիտա-
լիզմը, վոր այդ պետական կապիտալիզմն առավելություններ է
տալիս պրոլետարական պետությանը՝ մանր-բուրժուական տա-
րերքի դեմ մղվող պայքարում:

Անհրաժեշտություն չկա այստեղ մանրամասն կանգ առնելու
նոր տնտեսական քաղաքականության բնութագրման, նրա նպա-
տակները ու խնդիրները վրա: Այդ քաղաքականության բնորո-
շումը, վոր տվել է ընկեր Ստալինը և վորը լավ հայտնի յե բոլո-
րին, լիովին ու ամբողջությամբ սպառում է այդ հարցը:

Բայց քաղաքացիական պատերազմը վերջանալուց հետո նը-
վաճված «գաղարը» նույնպես չափազանց պայմանական դադար
էր: Սպասվում էր հետագա պայքար, համառ ու դժվարին պայ-
քար, վորն ուժերի պակաս լարում չէր պահանջում, քան ինտեր-
վենտները դեմ մղվող պատերազմը.— պայքար՝ տնտեսությունը
վերականգնելու համար, սոցիալիստական շինարարություն ծա-
վալելու համար, պայքար՝ տնտեսական ճակատում մանր-բուրժուա-
կան տարերքի դեմ, ներքին կապիտալիզմի ուժերի դեմ:

Իմպերիալիստական պատերազմի ու ինտերվենցիայի հետե-
վանքով ծայր աստիճան քայքայված յերկրում գերակշռում էր
գյուղացիական մանր տնտեսությունը: Լենինը 1918 թվականին
տալով Մորհրդային Ռուսաստանի տնտեսակարգի բնութագիրը և
այնուհետև կրկնելով այդ բնութագիրը 1921 թվականի մայիսին
իր «Պարենային հարկի մասին» հայտնի բրոշյուրի մեջ, մատնա-
նշում էր, թե՛ «մանր-գյուղացիական յերկրում գերակշռում է, և
չի կարող չգերակշռել, մանր-բուրժուական տարերքը. հողագործ-
ների մեծամասնությունը մանր ասպրանքային արտադրողներ
են»*:

Ի՞նչ բան է գյուղացիական մանր տնտեսությունը, ի՞նչ է
ներկայացնում մանր ասպրանքային արտադրողը— այս մասին բազ-
միցս խոսել են Լենինն ու Ստալինը:

* Լենին, Յերկեր, հատ. XXVI, էջ 322:

Նրանք մատնանշել են, վոր մանր գյուղացին— միջակը— ու-
նի յերկու հոգի. նա աշխատավոր է և դրա հետ միասին նա փոքր
տնտեսատեր է, առևտրական, և այդ գծով նա կարող է մերձենալ
կապիտալիստի հետ: Լենինն ու Ստալինն ասում եյին, — և այդ
լիովին հաստատվեց մեր պրակտիկայում,— վոր մանր գյուղացիա-
կան տնտեսությունը մուցոցող բազա յե մասնավոր կապիտալի-
ստական տնտեսությանը, նրա մասնավոր-կապիտալիստա-
կան տնտեսացը. գյուղացիության մասին խոսել է վորպես վերջին
կապիտալիստական դասակարգի մասին: Յեվ այդ ճիշտ է, վորով-
հետև այդ դասակարգից, գյուղացիությունից, առևտրի բազայի
վրա, մանր ասպրանքային տնտեսության բազայի վրա, իսկապես
կարող էր աճել և աճեց կապիտալիզմ:

Այդ պատճառով էլ Լենինն ամբողջ ուժով, ամենայն սրու-
թյամբ մեր կուսակցության առաջ դնում էր «ով ում»-ի հարցը.
նա կուսակցությանը նախագուշացնում էր, վոր առջևում դեռ
դժվարին ու համառ պայքար կա՝ ներքին կապիտալիզմի դեմ,
վորն աճում է մանր-ասպրանքային տնտեսության բազայի վրա,
վոր այդ կապիտալիզմն այն ժամանակ տնտեսական ավելի հաս-
տատուն բազա ունեն, քան սոցիալիզմը, և վոր այդ պայքարն
իսկապես կյանքի ու մահվան պայքար էր: Հայտնի յե, թե այդ
հարցն ինչպիսի կենսական հարց էր հանդիսանում մեր կուսակ-
ցական ու խորհրդային մի շարք համագումարներում, ինչպես ու-
շադիր կերպով անհրաժեշտ էր լինում հաշվի առնել մեր պետա-
կան տնտեսության յուրաքանչյուր քայլը, յուրաքանչյուր առաջ-
խաղացումը, և մյուս կողմից ինչպես էր անհրաժեշտ լինում հե-
տևել մասնավոր կապիտալիստի, կուլակի յուրաքանչյուր քայլին
և յուրաքանչյուր մանյովրին:

Դա դժվարին պայքար էր, վորի ընթացքում կուսակցու-
թյունն ու բանվոր դասակարգն ստիպված յեղան լարել բոլոր
ուժերը, վորպեսզի ամենուրեք, թե առևտրի մեջ, թե գյուղում,
թե արդյունաբերության մեջ, վորտեղ կապիտալը գործում էր
վնչ միայն բացահայտորեն, այլ վորտեղ նա դիմակավորված փոր-
ձում էր քայքայել մեր ապարատը— մեկը մյուսի հետևից նվաճել
կապիտալի դիրքերը, ընդարձակելով ու ամրապնդելով սոցիալիս-
տական սեկտորը: Հենվելով պրոլետարական դիկտատուրայի
հզորության վրա, հենվելով բանվորական մասսաների անձնազոհ
աջակցության վրա, հենվելով միջակի հետ ամուր դաշինքի քա-
ղաքականության վրա, գործելով սոցիալիստական պլանի հիման

վրա, պրոլետարական պետությունը քայլ առ քայլ նեղում, սահմանափակում և արտամղում երկապիտավիստական տարրերին:

Ըստվորում մեր կուսակցությունը ղեկավարվում եր առաջին հերթին Լենինի պատգամով՝ սոցիալիզմի բազան—խոշոր արդյունաբերությունը—ամրապնդելու մասին, յերկրի ելեկտրիֆիկացիան իրականացնելու մասին, առանց վորի անհնարին և սոցիալիզմ կառուցել: Որ որի վրա կուսակցությունը և խորհրդային պետությունն ուժեր ու միջոցներ եյին կուտակում, ամրապնդում ու աճեցնում եյին սոցիալիստական խոշոր արդյունաբերությունը, ամրապնդում ու ընդարձակում եյին եկոնոմիկայի սոցիալիստական սեկտորը: Չի կարելի մոռանալ, վոր մասնավոր կապիտալը տասը տարի սրանից առաջ դեռ բավականին խոշոր ուժ եր ներկայացնում: Յեթե խոսելու լինենք առևտրի մասին, ապա պետք ե ասել, վոր 1923—1924 թվականներին մանր կապիտալիստիկների մասնավոր առևտուրն իր կշռով կազմում եր 57,7 տոկոս: Վճռական լծակներն այստեղ ևս պրոլետարական պետության ձեռքին եյին, բայց ամբողջ ապրանքային շրջանառություն 57,7 տոկոսն այն ժամանակ դառնում եր մասնավոր կապիտալիստների ու կապիտալիստիկների ձեռքին: 1924—1925 թվականներին մասնավոր առևտրի կշիռը նվազեց մինչև 42,5 տոկոսի: 1925—1926 թվականներին մասնավոր առևտրի ծավալը կազմում եր 42,3 տոկոս: 1926—1927 թվականներին նա նվազեց մինչև 36,9 տոկոսի: 1928 թվականին նա կազմում եր արդեն 22,5 տոկոս, 1929 թվականին՝ 13,5 տոկոս, իսկ 1930 թվականին՝ միայն 5,6 տոկոս: Այսպես, քայլ առ քայլ տեղի յեր ունենում կապիտալիստական տարրերի արտամղումն առևտրի ասպարեզից:

Մասնավոր արդյունաբերությունն ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքի մեջ գրավում եր—1923—1924 թվականներին՝ 23,7 տոկոս, 1924—1925 թվականներին՝ 19, 1926—1927 թվականներին՝ 14, 1927—1928 թվականներին՝ 13,1, 1929 թվականին՝ 10,5, 1930 թվականին՝ 5,6, 1932 թվականին՝ 0,5, 1933 թվականին՝ 0,45, 1934 թվականին՝ 0,33 տոկոս:

Ներկայումս կապիտալիստական տարրերը վերջնականապես դուրս են մղված թե արդյունաբերությունից, թե առևտրից:

* * *

Յերբ տնտեսության վերականգնման պրոցեսն ավարտվում եր, մեր կուսակցությունն ընկեր Ստալինի ղեկավարությամբ հըռ-

չակեց ու սկսեց իրականացնել յերկրի ինդուստրացման քաղաքականությունը, վորպես միակ քաղաքականություն, վորն ընդունակ ե ապահովելու խորհրդային պետության ուժն ու անկախությունը, և վորն ընդունակ ե հիմք ստեղծելու մեր ամբողջ տնտեսությունը սոցիալիստական ձևով վերակառուցելու համար: Իրականացնելով յերկրի ինդուստրացումը, բոլշևիկների կուսակցությունը հետևեց մեր յերկրում սոցիալիզմի հաղթանակի հնարավորության մասին Լենինյան—ստալինյան ուսմունքին: Այդ վճռական, բեկման ետապում կուսակցության դեմ ծառայցալ հակահեղափոխական զինովյեվական ~ տրոցկիստական ոպողիցիան, վորը փորձում եր խախտել կուսակցության հավատը մեր յերկրում սոցիալիզմի հաղթանակի հնարավորության նկատմամբ, փորձում եր կուսակցությանը քաշ տալ այլ ձանապարհի վրա, վորն անխուսափելիորեն տանում եր դեպի կապիտալիզմի վերականգնումը, դեպի մեր բոլոր դերքերի հանձնումը:

Մեր կուսակցությունը շախշախեց զինովյեվական ~ տրոցկիստական ոպողիցիան և դրանով իսկ ուղի հարթեց կուսակցության անդամների համալսման, բոլոր աշխատավորներին մեր յերկրի ինդուստրացման և սոցիալիստական կարգի կառուցման մեծ գործի շուրջը մորիլիզացիայի յենթարկելու համար:

Յերկրի ինդուստրացման քաղաքականությունը կիրառվում եր վնչ միայն ներքին թշնամիներե, այլև արտաքին թշնամիներե՝ ոտարերկրյա կապիտալիստների և նրանց գործակիցների ու պնակալեզների ամենախիստ ընդդիմադրություն պայմաններում, վորոնք կոնսպիրացիայի եյին յենթարկվել և գործում եյին այստեղ, մեզ մոտ, մեր ղեկավար մարմիններում—Պետպլանում, արդյունաբերական և գյուղատնտեսական ժողկոմատներում ու հիմնարկներում, գործում եյին ամեն տեսակի մասնագետների դիմակի տակ, վորպեսզի վիժեցնեն ինդուստրացման գործը, մեզ ֆուսս հասցնեն, ինտերվենցիայի պայմաններ նախապատրաստեն:

Մեր կուսակցությունը համառորեն իրականացնում եր իր նպատակը և քայլ առ քայլ ավելի ու ավելի ծավալուն տեմպով կիրառում ինդուստրացման քաղաքականությունը: 1924—1925 թվականներից մինչև 1929 թվականը—մեծ բեկման ու համատարած կոլեկտիվացման անցնելու թվականը—շատ տարիներ չեն անցել, բայց այդ տարիների ընթացքում մեր արդյունաբերությունն այնքան աճեց, արդյունաբերական արտադրանքը մեր յերկրում այնքան ավելացավ, վոր սոցիալիստական արդյունա-

բերութիւնն սկսեց իսկապես խաղալ այն դերը, վոր նախորդուեալ
եր նրա համար մեր կուսակցութիւնը: Սոցիալիստական արդյուն-
նաբերութիւնը դառնում եր վնչ միայն մեր անկախութեան հիմ-
քը, Խորհրդային Միութեան ամբողջական հիմքը, այլև ամբողջ
ժողովրդական տնտեսութեան վերակառուցման բանալին և առա-
ջին հերթին գյուղատնտեսութեան վերակառուցման բանալին, այն
սոցիալիստական հիմունքներով վերափոխելու բանալին:

Յերբ լիարյուն սոցիալիստական արդյունաբերութիւնն սկը-
սեց տալ մեքենաներ, գյուղատնտեսական գործիքներ, յերբ
գյուղացին զգաց այդ նոր տեխնիկայի ուժը,— բեկում սկսվեց
գյուղացիութեան մեջ: Վնչ միայն չքավորութիւնը, այլև միջակ-
ները, վորոնք արդեն նախապատրաստվել էին մեր կուսակցու-
թեան նախընթաց քաղաքականութեան շնորհիվ, գործնականում
համոզվեցին կոոպերացման առավելութիւններին նկատմամբ, խո-
շոր տնտեսութեան առավելութիւններին նկատմամբ, նոր տեխ-
նիկայի առավելութիւններին նկատմամբ, և սկսեցին մասսայա-
բար անցնել կոլտնտեսութիւններին ուղին, հանրային խոշոր
տնտեսութեան ուղին:

Առաջին հնգամյակի տարիներին ծավալվեց վերջին, վճռա-
կան մարտը կուլակութեան դեմ, վորը թվի տեսակետից առավել
խոշորն եր դեռևս մնացած կապիտալիստական դասակարգերի
մեջ, վորի մասին Լենինն ասում եր, թե դրանք «ամենագազանա-
յին, ամենակոպիտ, ամենավայրագ շահագործողներն են, վորոնք
մյուս յերկիրների պատմութեան մեջ բազմիցս վերականգնել են
կալվածատերերի, թագավորների, տերտերների, կապիտալիստնե-
րի իշխանութիւնը»:

Այդ վերջին ու վճռական մարտը կուլակութեան դեմ տեղի
յեր ունենում համատարած կոլեկտիվացման հիմքի վրա: Յերբ
յերևան յեկավ գյուղացու ձգտումը դեպի կոլտնտեսութիւն, յերբ
կոլտնտեսութիւնները մտնելու պրոցեսն սկսեց ընդգրկել գյու-
ղացիութեան աղելի ու աղելի լայն մասսաները, մեր կուսակցու-
թիւնը կուլակութեան սահմանափակման ու արտաժաման քա-
ղաքականութեան շրջադարձ կատարեց դեպի կուլակութիւնը
վորպես դասակարգ, համատարած կոլեկտիվացման հիման վրա,
վերացնելու քաղաքականութիւնը:

Քոլորին հայտնի յե, թե վորքան տաք ու կատաղի յեր
կոլտնտեսութիւնների համար կուլակութեան դեմ մղվող պայքա-
րը, կուլակութեան, վորն ամեն կերպ փորձում եր հարվածներ
հասցնել մեր Խորհրդային պետութեանը, վորը սարսափ յեր

յենթարկում հացամթերումները, պայքարում եր խորհանտեսու-
թիւնների դեմ, փորձում եր քայքայել կոլտնտեսութիւնները,
ահաբեկում եր գյուղացիներին, ագիտացիա յեր մղում կոլտնտեսա-
յին շինարարութեան դեմ:

Դա դասակարգային ամենակատաղի պայքարի մի մոմենտ
եր և այդ պայքարն իր արտացոլումը գտավ նաև կուսակցու-
թեան ներսում:

Գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման մեծ
խնդիրն իրականացնելու համար մեր կուսակցութիւնը պետք ե
տապալել, ջախջախել, վորչնչացնել աջ ոպորտունիստներին, վո-
րոնք փորձում էին ընդդիմանալ կուսակցութեան այդ քաղաքա-
կանութեանը, վորոնք պայքարում էին թե ինդուստրացման,
թե գյուղատնտեսութեան սոցիալիստական վերափոխման դեմ,
վորոնք փորձում էին հետ քաշել մեզ, քաշել այն ուղին, վորը՝
ձիշտ այնպես, ինչպես և տրոցկիստական ոպողիցիայի ուղին՝ ան-
խուսափելիորեն տանում եր դեպի կապիտալիզմի վերականգ-
նումը:

Կուսակցութիւնը ջախջախեց աջ-ոպորտունիստական թե-
քումը, վորը կուլակութեան գործակալութիւնն եր Համ(բ)Կ
ներսում, կուսակցութիւնը նոր աստիճանի վրա համախմբեց բան-
վոր դասակարգն ու աշխատավոր գյուղացիութիւնը, խանդավա-
ռութեան կրակ վառեց նրանց մեջ: Ընդմիջտ կմնան սերունդնե-
րի հիշողութեան մեջ առաջին հնգամյակի մեծ խանդավառութիւնն
ու շինարարութեան պայթուց, յերբ բանվորները հերոսական նա-
խաձեռնութիւն, մեծագույն անձնազոհութիւն էին ցուցաբե-
րում նոր, սոցիալիստական ինդուստրիայի ստեղծման համար, դի-
գանտների՝ Մազնիտգորսկի, Դնեպրոստրոյի, Կուզնեցկի, տրակ-
տորային գործարանների և մի ամբողջ շարք այլ ձեռնարկու-
թիւնների կառուցման համար մղվող պայքարում, ձեռնարկու-
թիւններ, վորոնք նոր, սոցիալիստական ինդուստրիայի հիմքը
դարձան:

Մեր կուսակցութեան ձիշտ ղեկավարութիւնը և ոպորտու-
նիստների դեմ մղվող համառ պայքարն ապահովեցին այն, վոր
մեր յերկրում սոցիալիզմի հաղթանակի հնարավորութեան լենին-
յան-ստալինյան գաղափարը մարմնացավ կյանքում: Սոցիալիզմը
հաղթեց մեր յերկրում: Մեր յերկիրը ներկայումս սոցիալիստա-
կան յերկիր ե: ԽՍՀՄ-ում ստեղծված ե առաջնակարգ սոցիալիս-
տական արդյունաբերութիւն, վորը ժողովրդական տնտեսութեան
բոլոր ձեռքերը զինում ե առաջավոր տեխնիկայով: Ստեղծված ե



սոցիալիստական խոշոր գյուղատնտեսութուն՝ կոլտնտեսությունները ու խորհրտնտեսությունները հիմքի վրա, վորը գործում է ամենաթափափակ կերպով ու կատարելագործված մեքենաներով: Առևտուրը կատարվում է պետական ու կոոպերատիվ կազմակերպությունների միջոցով. նա խորհրդային առևտուր է առանց կապիտալիստների ու սպեկուլանտների:

1921 թվականին «Պարենային հարկի մասին» բրոշյուրի մեջ Լենինն ասում էր, թե «Սոցիալիստական խորհրդային հանրապետություն» արտահայտությունը նշանակում է խորհրդային իշխանություն վճռակալությունը՝ իրականացնելու անցումը սոցիալիզմին և վոչ յերբեք տվյալ տնտեսական կարգերը սոցիալիստական համարելը»: Այժմ մենք կարող ենք մեր հայրենիքն անվանել սոցիալիստական յերկիր, վոչ միայն այն նպատակը մատնանշելու իմաստով, վորով դեկավարվում են մեր կուսակցությունը, բանվոր դասակարգը և աշխատավոր գյուղացիությունը. այժմ «սոցիալիստական յերկիր» բնորոշումը լիովին համապատասխանում է այն իրականությունը, վորը մենք ներկայումս ունենք ԽՍՀՄ-ում:

Մեր Խորհրդային պետության մեջ այժմ անբաժանելիորեն տիրապետում է սոցիալիստական տնտեսությունը: Թե արդյունաբերություն մեջ, թե տրանսպորտում գործում են պետական, սոցիալիստական ձեռնարկությունները: Գյուղում, գյուղատնտեսություն մեջ նույնպես մենք ունենք պետական ձեռնարկություններ—մեքենատրակտորային կայաններն ու խորհրտնտեսությունները և բացի դրանից—կոլտնտեսային ձեռնարկությունները, վորոնք նմանապես սոցիալիստական ձեռնարկություններ են, և վերջին տարիների ընթացքում տեղի ունեցավ վոչ միայն—ավելի ճիշտ, վոչ այնքան—կոլտնտեսային արտադրության զգալի աճումը, այլև հենց կոլտնտեսությունների, կոլտնտեսություններում յեղած կարգերի ամրացումը, կոլտնտեսային կարգապահություն ամրապնդումը:

Այդ բնագավառում կատարված հեղաշրջման ամբողջ մեծությունը հասկանալու համար բավական է հիշեցնել, վոր դեռ միայն 9 տարի առաջ, 1927 թվականին, կոլտնտեսություններն իրենց մեջ համախմբված տնտեսությունների թվով բոլոր գյուղացիական տնտեսությունների 0,8 տոկոսն էին կազմում, իսկ ցանքի տարածությունը՝ ցանքի ամբողջ տարածության 0,7 տոկոսը: Գյուղատնտեսության կոլեկտիվացման դինամիկան ըստ տարիների հետևյալ պատկերն ունի.

Կոլեկտիվացման տոկոսը

Տարիներ	Ըստ ցանքի բյուլների թվի	Ըստ ցանքերի
1927	0,8	0,7
1928	1,7	1,2
1929	3,9	3,6
1930	23,6	30,9
1931	52,7	63,0
1932	61,5	75,7
1933	64,4	81,0
1934	71,4	84,7
1935 (առ 1/IV)	81,0	—
1936 (առ 1/IV)	89,0	—

Այսպիսով արդեն 1931 թվականին գյուղատնտեսության կեսից ավելին կոլեկտիվացված էր: Ներկայումս, նախնական, դեռ վոչ վերջնական տվյալներով, գյուղացիական բոլոր տնտեսությունների 89 տոկոսը ներգրավված է կոլտնտեսությունների մեջ, իսկ ինչ վերաբերում է ցանքի տարածությանը, ապա վերջինիս միայն 3 տոկոսն է գտնվում մասնավոր, անհատական տնտեսությունների ձեռքին:

Այսպիսով մեզ մոտ, թե քաղաքում, թե գյուղում անբաժանելիորեն տիրապետում է սոցիալիստական տնտեսությունը:

Մենք ասում ենք «անբաժանելիորեն տիրապետում են», վորովհետև ասել, թե սոցիալիստական տնտեսությունը միակն է մեր յերկրում, ճշգրիտ չէր լինի, դա չէր համապատասխանի իրերի փաստական դրությունը, վորովհետև բնակչության մոտ 10 տոկոսը դեռ կապված է մասնավոր տնտեսության հետ. այդ՝ գյուղացիական մանր տնտեսությունն է, այդ՝ տնայնագործն է, վորը կերպով և ընդգրկված չէ արտադրական կոոպերացիայի մեջ: Այդ մանր մասնավոր տնտեսության տոկոսը և մասնավանդ նրա տեսակարար կշիռն ու դերը խիստ աննշան են: Բայց նա դեռ գյուղություն ունի, և այդ բանը պետք է հաշվի առնել:

Այսպիսով, ավելի ճիշտ կլինի ասել, վոր սոցիալիստական տնտեսությունն անբաժանելիորեն տիրապետող է մեր յերկրում: Այդ լիովին ու ամբողջությամբ բնորոշում է դրությունը:

Սոցիալիստական տնտեսությունը հիմնական, անբաժանելիորեն տիրապետող ուժ է մեր յերկրում, մի ուժ, վորն ուղղոր-

թյուն ե տալիս ամեն ինչին, վորը վորոշում ե ամեն ինչ: Յե՛վ խոսելով դասակարգերի վոչնչացման մասին, մենք, բնականաբար, ամենից առաջ պետք ե յեղնեք այն հիմնականից, վորի մասին խոսել ե ընկեր Ստալինը պարոն Ռոյ Հոուարդի հետ ունեցած զրույցի ժամանակ.

«Մեր խորհրդային հասարակութունը սոցիալիստական ե այն պատճառով, վոր ֆարբիկաների, գործարանների, հողի, բանկերի ե տրանսպորտի միջոցների մասնավոր սեփականութունը մեզ մոտ վերացված ե ե փոխարինված ե հանրային սեփականութամբ: Հասարակական այն կազմակերպութունը, վոր ստեղծել ենք մենք, կարելի յե անվանել խորհրդային, սոցիալիստական, դեռ լիովին չավարտված կազմակերպութուն, բայց իր հիմքով՝ հասարակության սոցիալիստական կազմակերպություն: Այդ հասարակության հիմքըն ե կազմում հանրային սեփականութունը—պետական, այսինքն համաժողովրդական. ինչպես ե կոպերատիվ-կոոպերատիվ սեփականութունը»:

Ահա այն հանրագումարը, վոր կարելի յե կատարել ներկայումս, այն հանրագումարը, վորին հասել են մեր կուսակցությունն ու պրոլետարական դիկտատուրան դասակարգային համառ, կատարի կովի շնորհիվ, բանվոր դասակարգի բոլոր ուժերը մոբիլիզացիայի յենթարկելու, նրանց կազմակերպելու շնորհիվ, վորպեսզի աշխատավոր գյուղացիության հետ միասին, նրա հետ դաշն կնքած, սոցիալիստական հասարակութուն կառուցվի:

* * *

Մերանից յեղնելով ել մենք պետք ե քննության առնենք դասակարգերի ե մեր յերկրում գրանց վոչնչացման հարցը:

Ի՞նչ իմաստով են մեզ մոտ վոչնչացված դասակարգերը: «Մեծ նախաձեռնութուն» հոդվածի մեջ, վորը «Պետութուն ե հեղափոխութուն» գրքի հետ միասին անհրաժեշտ ե այժմ կարգալ ու կրկին անգամ կարգալ վորովհետև այդ յերկերի մեջ ուղղակի կերպով մեր ժամանակաշրջանին վերաբերող մտքերի հըսկայական հարստութուն կա Լենինն ասում ե.

«Իսկ ինչ ե նշանակում «դասակարգերի վոչնչացում»: Ամենքը ովքեր իրենց անվանում են սոցիալիստներ, ընդունում են սոցիալիզմի այդ վերջնական նպատակը, սակայն դեռևս վոչ բոլորը խելամուտ են լինում նրա նշանակու-

թյանը: Դասակարգեր կոչվում են մարդկանց մեծ խմբերը, վորոնք տարբերվում են ըստ իրենց զբաղած տեղի հասարակական արտադրության պատմականորեն վորոշ սխառմում, ըստ իրենց ունեցած հարաբերության (մեծ մասամբ ամրապնդված ե ձևակերպված որենքներով) արտադրության միջոցների նկատմամբ, ըստ իրենց գերի աշխատանքի հասարակական կազմակերպման մեջ ե, հետևաբար, ըստ իրենց տրամադրության տակ յեղած հասարակական հարստության բաժնի ստացման յեղանակների ու չափերի: Դասակարգերը, դրանք մարդկանց այնպիսի խմբեր են, վորոնցից մեկը կարող ե յուրացնել մյուսի աշխատանքը, շնորհիվ հասարակական տնտեսության վորոշ կացութաձևի մեջ նրանց զբաղած տեղի տարբերության»*:

Յե՛վ ահա, յեթե մենք խելամուտ լինենք ներկայիս իրադրությանը՝ դասակարգերի լենինյան այդ բնորոշման տեսակետից, յեթե մենք հաշվի առնենք, վոր ըստ Լենինի դասակարգերը մարդկանց այնպիսի խմբեր են, վորոնցից մեկը կարող ե յուրացնել մյուսի աշխատանքը՝ հասարակական արտադրության վորոշ կացութաձևի մեջ նրանց զբաղած տեղի տարբերության վորոշ կացութաձևի մեջ նրանց զբաղած տեղի տարբերության հետևանքով, ե յեթե մենք հարց տանք, թե՛ մեզ մոտ, մեր Սորհրդանքով, ե յեթե մենք հարց տանք, թե՛ մեզ մոտ, մեր Սորհրդային յերկրում, ներկայումս կա՞ն արդյոք մարդկանց այնպիսի խմբեր, վորոնք կարող են յուրացնել մյուս մարդկանց աշխատանքը, վորոնք կարող են շահագործել մյուսներին՝ հասարակական արտադրության մեջ իրենց ունեցած դիրքի շնորհիվ, ապա այդ հարցին մենք պետք ե պատասխանենք բացասաբար:

Կա՞ն արդյոք մեզ մոտ ներկայումս շահագործող դասակարգեր: Պարզ ե, վոր մեր հասարակական կազմակերպութունը զարգացման ներկա աստիճանում այնպիսին ե, վորն այլևս գոյության հնարավորութուն չի տալիս այդ շահագործող դասակարգերին, գոյության հնարավորութուն չի տալիս մարդկանց այնպիսի խմբերի, վորոնք յուրացնում են ե կարող են յուրացնել այլ մարդկանց աշխատանքը:

Այս բանին մենք հասել ենք Սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի հետևանքով ե վերջին ժամանակներս՝ սոցիալիստական շինարարության ամենալայն ծավալման, կատարյալ սոցիալիստական տարբերի արտամղման ու վերացման, համատարալ կոլեկտիվացման հիման վրա կուլակութունը վորպես դասա-

* Լենին, Յերկեր, հատ. XXIV, եջ 337 (ուսերեն):

կարգ վերացնելու հետևանքով: Մեր յերկրում չկան կապիտալիստներ, չկան կալվածատերեր, չկան կապիտալիստական սուկտրականներ, չկան կուլակներ:

Սակայն պետք է նկատի ունենալ, վոր մեզ մոտ դեռ գոյութուն ունի արտադրութայն միջոցների մասնավոր սեփականութայն մանր տնտեսութայն մեջ, կան անհատական տնտեսութայն մնացորդներ, կան տնայնագործներ: Անուշադրութայն դեպքում, մեր աչքաթող անելու դեպքում կարող է դեռ ստացվել այնպիսի դրություն, վոր այդտեղից սկսեն աճել կապիտալիստիկներ, սպեկուլանտներ, չարչիներ և այլն:

Ուստի և, յերբեք չսահմանափակվելով այդ հաջողութայն սոսկ արձանագրումով, անհրաժեշտ է թե մեր որենքները, թե մեր պրակտիկան ուղղել այն նպատակին, վորպեսզի այդ մասնավոր տնտեսությունը, վորը դեռ գոյութուն ունի և թուլատրվում է, լինի իսկապես աշխատավորական տնտեսություն, այսինքն, վորպեսզի այդ տնտեսությունը յեկամուտ ստանա և իր գոյությունը պահպանի վնչ թե այլ մարդկանց շահագործելու հիման վրա, վնչ թե սպեկուլացիայի հիման վրա, այլ այդ մանր տնտեսատիրոջ իսկապես անձնական աշխատանքի հիման վրա:

Մեր յերկրում շահագործող դասակարգերը վերջնականապես վոնչնչացված են, նրանց վտարի տակի հողը խլված է վերջնականապես: Նրանք մեզ մոտ գոյութուն չունեն, և սոցիալիստական հասարակութայն հասարակական կազմակերպումը վոչ մի հնարավորություն չի տալիս նրանց գոյության ու առաջացման համար:

Սա յե առաջին հիմքն այն բանի, վոր ընկեր Ստալինը պարոն Ռոյ Հոուարդի հետ ունեցած գրույցի ժամանակ կարող եր ասել, վոր մեր յերկրում ներկայումս չկան միմյանցից արմատապես տարբերվող դասակարգեր: Դրա մյուս հիմքը հանդիսացավ գյուղացիութայն սոցիալիստական վերափոխման այն պրոցեսը, վորն այժմ մոտենում է ավարտման:

Ինչ դրության մեջ է գտնվում ներկայումս գյուղացիությունը մեր յերկրում, և ի՞նչ փոխարարերություններ գոյութուն ունեն ՍՍՀՄ-ում բանվորների և գյուղացիների միջև: Տարբերվում են արդյոք այդ դասակարգերն այժմ այնպես, ինչպես տարբերվում էին առաջ, յերբ բանվոր դասակարգն զբաղված եր պետական սոցիալիստական խոշոր ձեռնարկություններում, իսկ գյուղացին մնում եր մանր սեփականատեր և աշխատում եր իր մանր մասնավոր տնտեսութայն մեջ:

Շարունակվում է արդյոք ներկայումս գոյութուն ունենալ

այն ձևով, ինչպես նա գոյութուն ունեւր մի քանի տարի սրանից առաջ, մանր մասնավոր սեփականատերերի դասակարգի — գյուղացիների — և հետևողականորեն սոցիալիստական տիպի ձեռնարկություններում աշխատող բանվոր դասակարգի միջև յեղած դասակարգային արմատական տարբերությունը:

Վնչ, այդ արմատական տարբերությունն այժմ չկա: Ներկայումս թե բանվորները, թե գյուղացի-կոլտնտեսականներն աշխատում են սոցիալիստական ձեռնարկություններում, աշխատում են տնտեսութայն սոցիալիստական կազմակերպման շրջանակներում, սոցիալիստական տնտեսութայն շրջանակներում:

Վորոշ տարբերություններ բանվորների ու կոլտնտեսականների միջև, արտադրութայն միջոցների նկատմամբ ունեցած վերաբերմունքի տեսակետից, դեռ կան, և այդ մասին կխոսենք ստորև, բայց դասակարգային առնաճակատ տարբերություն բանվորների ու գյուղացիների միջև մեր յերկրում այժմ արդեն չկա: Հիմնականում թե բանվորը, թե կոլտնտեսականն այժմ աշխատում են արտադրութայն այնպիսի միջոցներով, վորոնք սոցիալիստական հանրային սեփականություն են, այնպիսի գործիքներով, վորոնք հանրային, սոցիալիստական սեփականություն են:

Գյուղացիներն աշխատում են կոլտնտեսություններում, վորտեղ հանրայնացված են արտադրութայն հիմնական միջոցները, ըստվորում նրանք աշխատում են կամ արտադրութայն այնպիսի միջոցներով, վորոնք կոլտնտեսութայնն են պատկանում, ուստի և հանդիսանում են հանրային, սոցիալիստական սեփականություն, կամ թե արտադրութայն այնպիսի միջոցներով (տրակտորներ, կոմբայններ և այլ մեքենաներ), վորոնք պատկանում են սոցիալիստական պետութայնը և վորոնք պետությունը մեքենա-տրակտորական պետութայնի միջոցով ոգտագործելու յե տալիս կոլտնտեսատրակայանների միջոցով ոգտագործելու յե տալիս կոլտնտեսություններին վորոշ պայմաններով, ոգնելով նրանց զարգացնելու, թյուններին վորոշ պայմաններով, ոգնելով նրանց զարգացնելու, կերտելու և բարձրացնելու սոցիալիստական հողագործությունը:

Յեթե խոսելու լինենք հանրային յեկամուտից բաժին ստանալու մասնակցութայն մասին, հանրային յեկամուտից բաժին ստանալու ձևերի ու մեթոդների տեսակետից, ապա այստեղ ճիշտ ունեն կերպ կարելի յե ասել, վոր ինչպես բանվոր դասակարգը, այնպես և կոլտնտեսականները, յեկամուտի իրենց բաժինն ստանում են հանրային, սոցիալիստական ֆոնդից, ստանում են հանրային, սոցիալիստական յեկամուտից:

Յեվ այստեղ բանվորների ու գյուղացիների միջև դեռ կա

տարբերութիւնն ու չափազանց եյական տարբերութիւնն, դրա մասին նույնպէս կ'ստանանք ստորև:

Սակայն, այնուամենայնիվ, հիմնականն այն է, վոր այժմ գյուղացի-կոլտնտեսականն իր յեկամուտն ստանում է վոչ այնպէս, ինչպէս առաջ ստանում էր մենատնտես-գյուղացին, վորն իր տնտեսութիւնը վարում էր արտադրութեան անհատական միջոցներով, գյուղացիական մանր տնտեսութեան հիման վրա: Կոլտնտեսականներն իրենց յեկամուտն ստանում են խոշոր սոցիալիստական հանրային տնտեսութեան աշխատանքի և յեկամուտի մեջ ունեցած մասնակցութեան հետևանքով:

Այդ պատճառով ել մենք կարող ենք ասել, վոր վճռական աստիճանի յենք հասել Խորհրդային միութեան մեջ դասակարգերի վոչնչացման ասպարեզում—վճռական աստիճան այն պատճառով, վոր մեր յերկրի ամբողջ բնակչութիւնը—փոքր բացառութեամբ, վորոնց մասին արդեն խոսեցինք—մեր յերկրի ամբողջ բնակչութիւնը, ինչպէս ասել է ընկեր Ստալինը, քաղաքի ու գյուղի ազատ աշխատավորներ են—բանվորներ, կոլտնտեսականներ, ինտելիգենցիա, վորոնք աշխատում են սոցիալիստական ձեռնարկութեաններում և իրենց յեկամուտն ստանում են հանրային-սոցիալիստական Փոնդից:

Այդ իմաստով պետք է ասել, վոր ներկայումս վճռական քայլեր են կատարված դասակարգերի վոչնչացման ուղղութեամբ, վորովհետև վոչնչացված է արտադրութեան միջոցների մասնավոր սեփականութիւնը, վորը դասակարգային բաժանման հիմքն է, վորը մարդու կողմից մարդու շահագործման և դասակարգային պայքարի հիմքն է, վորը պատերազմների աղբյուր է: Արտադրութեան միջոցները մեր յերկրում, չնչին բացառութեամբ, հանրային սեփականութիւնն, սոցիալիստական սեփականութիւնն են: Սա հիմնականն է:

Բացի այդ, պետք է նաև մատնանշել, վոր մեր յերկրում ներկայումս իշխում է սոցիալիզմի սկզբունքը՝ «Չաշխատողը չի ուտի»:

Հայտնի յէ, վոր Լենինը հսկայական նշանակութիւնն էր տալիս այդ սկզբունքին: Ըստվորում Լենինն ընդգծում էր այդ սկզբունքի փաստական իրականացման հատուկ կարևորութիւնը և բոլոր նրանց դեմ ամենաանողոք պայքար մղելու անհրաժեշտութիւնը, ովքեր շեղվում են այդ սկզբունքի պահպանումից և խախտում են այն: Յե՛վ իսկապէս, ներկայումս մեր յերկրում, գուցե փոքր բացառութեամբ (վորովհետև առանձնապէս այնպիսի մի մեծ

յերկրում, ինչպիսին մերն է, կարող են լինել ամեն տեսակի բացառութիւններ), ամբողջ բնակչութիւնն իր յեկամուտն ստանում է սոցիալիստական ձեռնարկութիւններում կատարած աշխատանքից և իր համար ունեւոր ու կուլտուրական կյանքի պայմաններ կարող է ստեղծել միայն այն դեպքում, յեթե նա աշխատում է: Պորտաբույծներ—մարդկանց այն խումբը, վորոնք առաջ չեյին աշխատում, բայց ապրում, ճոխ կյանք էյին վարում բանվորներին ու գյուղացիներին շահագործելու հաշվին — այժմ մեր յերկրում չկան: Նրանք վերացված են. հասարակութեան սոցիալիստական կազմակերպումը բացառում է նրանց առաջացման հնարավորութիւնը:

Մեզ մոտ իրականացվում է այն սկզբունքը, վորը կոմունիզմի առաջին փուլի հատկանշական գիծն է — «Յուրաքանչյուրից ըստ նրա ընդունակութեան, յուրաքանչյուրին ըստ նրա աշխատանքի»: Այդ սկզբունքը կիրառվում է վոչ միայն պետական ձեռնարկութիւններում, հետևողականորեն-սոցիալիստական տիպի ձեռնարկութիւններում, այլ նաև կոլտնտեսութիւններում: Հենց ձեռնարկութիւններում, այլ նաև կոլտնտեսութիւններում աշխատանքի պատճառով, վոր հաջողվեց կոլտնտեսութիւններում աշխատանքը կազմակերպել սոցիալիստական այդ սկզբունքի հիման վրա, հենց այդ բանի շնորհիվ կոլտնտեսութիւններն ամրապնդվեցին, հենց այդ բանի շնորհիվ կոլտնտեսութիւններն ամրապնդվեցին, աշխատանքն այնտեղ առաջ գնաց և սկսեց տարեցտարի բարելավվել:

«Յուրաքանչյուրից ըստ նրա ընդունակութեանների, յուրաքանչյուրին» ըստ նրա աշխատանքի» սոցիալիստական սկզբունքը տվյալ աստիճանում սոցիալիզմի զարգացման ու ամրապնդման, բանվոր դասակարգի վերելքի, աշխատանքային կարգապահութեան ու ժեղացման և աշխատանքի արտադրողականութեան աճման իրականացման և աշխատանքի արտադրողականութեան աճման կարևորագույն սկզբունքներեց մեկն է: Այդ կասկածից վեր է: Այդ պատճառով մեր պետութեան խնդիրն է՝ ամենայն հետևողապէս կանոնաւորել, իսկ յերբ անհրաժեշտ է՝ ամենայն խստութեամբ իրականացնել այդ սոցիալիստական սկզբունքը և վերահսկողութիւնն ունենալ նրա իրականացման նկատմամբ:

Մեր սոցիալիստական պետութեան մեջ պատմութեան մեջ առաջին անգամ փաստորեն ապահովված է աշխատանքի այն իրավունքը, վորի մասին առաջ դատարկ տեղը պնդում էյին ամեն տեսակի սոցիալիստական ու լիբերալ շողակրատները: Նրանք տեսակի սոցիալիստական ու լիբերալ շողակրատները (ինչպէս և այժմ վորոշ տեղերում փորձում էյին այդ սկզբունքը (ինչպէս և այժմ վորոշ տեղերում փորձում են այդ սկզբունքի պահպանումից և խախտում են այն: Յե՛վ իսկապէս, ներկայումս մեր յերկրում, գուցե փոքր բացառութեամբ (վորովհետև առանձնապէս այնպիսի մի մեծ

տաղբուկայան պայմաններում: Այդ չհաջողվեց և յերբեք չի հաջողվի, վորովհետև արդյունաբերական պահեստի բանակը, գործազուրկները բանակը, կապիտալիստական կարգերի անհրաժեշտ պատկանելութունն և և այդ բանակն աճում և կապիտալիստական արտադրութայան դարգացմանը զուգընթաց: Գործազրկութայան ու թշվառութայան այդ բանակն աղետալին չափերով ընդարձակվում և տնտեսական ճգնաժամերի շրջանում, վորոնք անխուսափելի յեն կապիտալիզմի որով:

ԽՍՀՄ-ում կառուցված և տնտեսութայան սոցիալիստական կազմակերպում, և շնորհիվ արտադրութայան այդ սոցիալիստական կազմակերպման ու տնտեսութունը պլանայնորեն վարելուն վորչնչացված և ճգնաժամերի բուն հնարավորութունը, ընդմիջտ վորչնչացված և գործազրկութունը:

Իրանով իսկ, մենք մեր պետութայան մեջ յուրաքանչյուր քաղաքացու համար ապահովեցինք յերաշխավորված ու վարձատրվող աշխատանք ստանալու իրավունք: Մենք աշխատանքի ուսալ իրավունք ապահովեցինք Խորհրդային յերկրի յուրաքանչյուր քաղաքացու համար:

Գյուղում ընդմիջտ վորչնչացված և գյուղացիութայան շերտավորումը: Բոլոր կոլտնտեսականների համար ստեղծված են ունեւոր, կուլտուրական կյանքի հասնելու հնարավորութուններ:

Այդ բանը նվաճված և հաստատուն կերպով և դա վոչ վոք չի խլի մեզանից: Յեւ դրա մեջն և մեր Խորհրդային յերկրի, խորհրդային հասարակարգի մեծագույն նվաճումներից մեկը:

Ահա թե ինչու մենք կարող ենք ներկայումս ասել, վոր վճռական աստիճան և ձեռք բերված դասակարգերի վորչնչացման գործում, վոր դասակարգերի վորչնչացման ասպարեղում գլխավորն արդեն կատարված և, վոր կառուցված և հասարակութայան՝ իր հիմքում սոցիալիստական կազմակերպութունը:

* *

Բայց անհրաժեշտ և, վոր մենք տեսնենք վոչ միայն այն արդյունքը, վորն ստացվել և հսկայական պատմական աշխատանքի հետևանքով. մենք պետք և տեսնենք նաև դասակարգային տարբերութունների այն մնացորդները, վորոնք դեռ գոյութուն ունեն մեր յերկրում: Մենք պետք և հիշենք, վոր դասակարգերի վորչնչացման պրոցեսը դեռ ավարտված չէ, վոր դասակարգերի վորչնչացման պրոցեսը շարունակվում և:

Պարոն Ռոյ Հոուարդի հետ ունեցած զրույցի ժամանակ ըն-

կեր Ստալինը մատնանշեց, վոր մեր սոցիալիստական հասարակութայան մեջ չկան միմյանցից արմատապես տարբերվող դասակարգեր, բայց կան հասարակական տարբեր խավեր: Մեր հասարակութայան մեջ կան բանվորներ, գյուղացիներ, ինտելիգենցիա: Ավելի մանրամասն կանգ առնենք այդ խավերից յուրաքանչյուրի նշանակութայան վրա:

Յերբեմն ժողովներում հարց են տալիս, թե այժմ կարող ենք արդյոք խոսել մեր յերկրում բանվոր դասակարգի մասին, կարող ենք մենք արդյոք խորհրդային բանվորներին անվանել պրոլետարներ:

Ի պատասխան այդ հարցի կարելի չէ ասել հետևյալը. — Իհարկե, բանվոր դասակարգի գրութունը մեզ մոտ արմատապես փոխվել և: Պրոլետարիատ ասելով միշտ հասկացվել և կապիտալիստական հասարակութայան վարձու բանվորների շահագործվող դասակարգը, դասակարգ, վորը զրկված և արտադրութայան միջոցներից և ստիպված և վաճառել իր աշխատուժը: Բայց դեռ են գելսը «Անտի-Գյուրինգում», հետևելով Մարքսին, մատնանշել և, վոր յերբ «պրոլետարիատն իր ձեռքն և վերցնում պետական իշխանութունը և արտադրութայան միջոցները դարձնում և նախ և առաջ պետական սեփականութուն», «դրանով իսկ նա վորչնչացնում և ինքն իրեն վորպես պրոլետարիատ»: Պրոլետարիատը նրավաճելով պետական իշխանութունը, եքսպրոպրիացիայի յենթարկելով կապիտալիստների ժամավոր սեփականութունը և դարձնելով այն հանրային սեփականութուն, դառնալով տիրապետող դասակարգ, ամրապնդելով իր դիկտատուրան, այլևս չի հանդիսադնում պրոլետարիատ, բառի հին իմաստով: Բանվոր դասակարգը Խորհրդային միութայան մեջ պրոլետարիատ չէ, բառի նախկին իմաստով, այսինքն, նա բուրժուազիայի կողմից ճնշվող դասակարգ, նրա կողմից շահագործվող դասակարգ չէ:

Պրոլետարիատը մեր յերկրում դարձել և տիրապետող դասակարգ, վորը ղեկավարում և սոցիալիզմի կառուցման գործը, դասակարգ, վորը գյուղացիութայան հետ դաշն կնքած սոցիալիստական հասարակութուն և ստեղծում:

Այսպիսով, բանվոր դասակարգի գրութունը մեր յերկրում արմատապես տարբերվում և թե նրա նախկին գրութունից, թե կապիտալիստական յերկիրների պրոլետարիատի գրութունից:

Բայց բանվոր դասակարգը մեր յերկրում ևս դեռ տարբերվում և բնակչութայան մյուս խմբերից, քանի վոր բանվորները ԽՍՀՄ բնակչութայան ղեկավար մասն են հանդիսանում, նրանք

մեր հայրենիքի աշխատավոր բնակչութեան ամենից ավելի կազմակերպված, քաղաքականապես ամենից ավելի գիտակից, ամենից ավելի կուլտուրական մասն են: Նրանք յեղել են և այժմ ել հանդիսանում են բոլոր աշխատավորների ավանգարդը սոցիալիստական շինարարութեան գործում, ԽՍՀՄ քաղաքական կյանքում:

Գյուղացին մեր յերկրում դադարել է մանր սեփականատեր լինելուց, դադարել է փոքր տնտեսատեր լինելուց, դադարել է այնպիսի դասակարգ լինելուց, վորը սննդատու բազա յեր կապիտալիստական տարրերի համար: Նա դադարել է այնպիսի դասակարգ լինելուց, վորը շերտավորվում էր, դիֆերենցիացիայի յեր յենթարկվում, առանձնացնելով մեկ կողմից հարուստների, շահագործողների փոքրաթիվ վերնախավ, իսկ մյուս կողմից՝ չքավորների զգալի խավեր:

Գյուղացիները ներկայումս սոցիալիստական ձեռնարկությունների աշխատողներ են: Կոլտնտեսային կարգի հաղթանակն անխորտակելի դարձրեց բանվոր դասակարգի ու գյուղացիութեան դաշինքը: Կոլտնտեսական գյուղացիները սոցիալիստական պետութեան հաստատուն հենարանն են:

Սոցիալիստական ձեռնարկություններում համախմբված խորհրդային նոր գյուղացիությունը, վորն աճում է կուլտուրապես ու քաղաքականապես, բանվորների հետ ձեռք ձեռքի նոր սոցիալիստական հասարակարգ է կառուցում, բանվորների հետ միասին բաղմապատկում է իր հայրենիքի ուժը, հարստությունն ու կուլտուրան և ունևոր կյանք է կառուցում Խորհրդային յերկրի բոլոր քաղաքացիների համար:

Ի այց յերբ մենք խոսում ենք դասակարգային տարբերությունների մնացորդների մասին, ապա այստեղ ամենայնպես նշանակութուն ունի այն մոմենտը, վորն ընկեր Ստալինը նշեց պարոն Ռոյ Հոուարդի հետ ունեցած իր զրույցի ժամանակ, յերբ նա մասնանշեց մեր յերկրում յեղած սոցիալիստական, հանրային սեփականութեան յերկու ձևերը: Նա նշեց նախ պետական, այսինքն համաժողովրդական սեփականությունը և յերկրորդ՝ կոոպերատիվ-կոլտնտեսային սեփականությունը: Այս հանգամանքը խիստ եյական է: Մենք պետք է միշտ նկատի ունենանք սոցիալիստական, հանրային սեփականութեան այդ ձևերը:

Սոցիալիստական սեփականութեան այդ յերկու ձևերի տարբերությունը շինծու չէ: Վնչ, այդ ձևերը ծագել են պատմականորեն, զրանք ծնունդ են առել մեր հեղափոխութեան ամբողջ պատ-

մութեան, սոցիալիզմի համար բանվոր դասակարգի ու գյուղացիութեան մղած ամբողջ պայքարի հետևանքով: Յեվ նույնիսկ ավելին. մենք կարող ենք ասել, վոր սեփականութեան այդ յերկու ձևերը մեր ներկայիս ամբողջ կյանքի, մեր ամբողջ շինարարութեան հիմքն են կազմում: Յուրաքանչյուր վորոշման ժամանակ, քաղաքական յուրաքանչյուր քայլի ժամանակ անհրաժեշտ են նկատի ունենալ սոցիալիստական սեփականութեան այդ յերկու ձևերի միջև յեղած վնչ միայն ընդհանրությունը, այլև տարբերությունը: Պետք է միշտ նկատի ունենալ պետական ձեռնարկությունների և հետևողականորեն-սոցիալիստական տիպի ձեռնարկությունների և կոոպերատիվ-կոլտնտեսային նույնպես սոցիալիստական ձեռնարկությունների առանձնահատկություններն ու տարբերությունները:

Մեզ մոտ սովորաբար աչքաթող է արվում այդ տարբերությունը: Վորոշ ընկերներ ամբողջը մի կույտի յեն վերածում և սքողում են սոցիալիստական ձեռնարկությունների այդ յերկու տիպերի միջև յեղած տարբերությունը, մոռանում են, թե ինչ բան տիպերի միջև յեղած տարբերությունը, մոռանում են, և կոլտնտեսությունը և ինչ պետական գործարանը, մոռանում են, և կուլտնտեսական յերկու ձևերը ինչպիսի տարբերություններ ունենք բանվորի ու կոլտնտեսականի դրութեան մեջ:

Կան մարդիկ, վորոնք աչքում ջնջվում են բոլոր տարբերությունները, մարդիկ, վորոնք այնքան են «վոգեկորվել ու վոգեշնչվել» փայլուն հաղթանակներով, վոր նրանց աչքում սկսել է ամեն ինչ խառնաշփոթ յերևար և նրանք սկսել են կորցնել և այն կարևորը, այն եյականը, վորը հենց ներկայումս մեր ամբողջ կարգի հիմքն է:

Մենք մեր յերկրում ունենք մեկ կողմից պետական սեփականություն, վորն ընկեր Ստալինը բնորոշում է վորպես համաժողովրդական սեփականություն, վորն առաջատար սկզբունք է հանդիմանում մեր ամբողջ Խորհրդային պետութեան մեջ, հանրային սեփականություն, վորի վրա հիմնվում են մեր հետևողականորեն-սոցիալիստական տիպի ձեռնարկությունները: Դրանք պետական սոցիալիստական տիպի ձեռնարկությունները, տրանսպորտը և այլն: Դա այն ֆարրիկաներն են, գործարանի իշխանությունը գրավելուց հետո առե, ինչ բանվոր դասակարգն իշխանությունը գրավելուց հետո առաջին իսկ շրջանում վերցրեց, բռնագրավեց բուրժուազիայից: Այդ սեփականությունը հանրայնացման համար նախապատրաստված էր արդեն կապիտալիզմի բուն զարգացմամբ, քանի վոր դրանք իրենց եյությամբ արդեն արտադրութեան հանրային միջոցներ էյին, վորոնք պահանջում էին բանվորների հսկայական

մասսաների ջանքերի գործադրում, բայց վորոնք կապիտալիստների մասնավոր սեփականությունն էյին կազմում:

Բանվոր դասակարգը բռնագրավեց այդ սեփականությունը նա առաջին իսկ քայլերից այդ սեփականությունը դարձրեց համաժողովրդական. նա, այնուհետև, սոցիալիզմի շինարարությունը շնորհիվ, իր անձնագործ աշխատանքի շնորհիվ, բազմապատկեց այդ սեփականությունը այն աստիճան, վոր նա մի քանի անգամ գերազանցում է այն բանից, վորպիսին էր նա մի ժամանակ, հեղափոխություն առաջին տարիներին:

Ահա այդ սեփականությունը, վոր ստեղծել է բանվոր դասակարգը, ստեղծել է կազմակերպված պրոլետարիատը, բոլոր աշխատավոր մասսաների ղեկավարը, — այդ սեփականությունը, վոր գտնվում է Սորհրդային պետության ձեռքին, համաժողովրդական սեփականություն է: Այստեղ պետությունն է տնօրինում ամբողջ ունեցվածքը, — այստեղ միանձնյա տեր է հանդիսանում ինքը սոցիալիստական պետությունը, վորը գործում է հոգուտ բոլոր աշխատավորներին շահերի, հոգուտ սոցիալիզմի շահերի:

Պետությունը պետական ձեռնարկությունների բոլոր նյութական միջոցների սեփականատերն է, նրանց շրջանառու և ամենտեսակի այլ կապիտալների սեփականատերը: Պետությունը նշում է յուրաքանչյուր ձեռնարկության աշխատանքի պլանն ու ծրագիրը, և աշխատանքների այդ ծրագիրն անհապաղ կատարման է յենթակա յուրաքանչյուր ձեռնարկության կողմից, վորովհետև դա պետական առաջադրանք է. դա այնպիսի տնտեսատիրոջ առաջադրանք է, վորը գործում է հոգուտ ամբողջ ժողովրդի շահերի:

Պետական այդ ձեռնարկություններն իրենց վոչ մի մասով չեն կարող վաճառվել կամ ուրիշին հանձնվել, առանց պետության թույլտվության: Մեզ մոտ գործում է վորոշակի որենք, վորն ասում է, վոր վոչ մի տրեստ, վոչ մի տնտեսական վարչություն, վորը պետական մարմին է հանդիսանում, իրավունք չունի իր ունեցվածքից վորևէ բան վաճառելու: Մեր ձեռնարկությունների պետական ունեցվածքը չի կարող վաճառվել: Նա միայն կարող է հանձնվել մեկ ձեռնարկությունից մյուսին, պետական մեկ կազմակերպությունից մյուսին, և միայն պետական կառավարման բարձրագույն մարմինների վորոշմամբ:

Ահա թե ինչ է նշանակում պետական սեփականությունը: Միանգամայն պարզ է, վոր այդ սեփականությունը, վորն ընդգրկում է մեր յերկրի ժողովրդական տնտեսության ամենավճռական ողակները, վորն ընդգրկում է բոլոր արդյունաբերական ձեռ-

նարկությունները — հանքերը, գործարանները, բանկերը, առևտրական ձեռնարկությունները, յերկաթուղիները, ողային տրանսպորտը և այլն, — այդ սեփականությունը ճիշտ այնպես, ինչպես և հողը, վորը համաժողովրդական պետական սեփականություն է, վրձնական ուժ, վճռական լծակ է հանդիսանում մեր տնտեսության մեջ:

Այդ սեփականությունից տարբերվում է կոոպերատիվ-կոլտնտեսային սեփականությունը: Այդ սեփականությունը նույնպես սոցիալիստական սեփականություն է: Կոլտնտեսություններն աշխատավորների միավորումներ են, վորոնք գործում են իրենց հանրայնացված արտադրության միջոցների և արտադրության այն միջոցների ոգնությունով, վոր տրամադրում է նրանց պետությունը: Նրանք աշխատում են համաժողովրդական սեփականությունը: Նրանք աշխատում են համաժողովրդական սեփականությունը հանդիսացող հողի վրա, վորը կոլտնտեսություններն է ամբողջում անժամկետ ոգտագործման համար, այսինքն առհավետ: Իրենց աշխատանքում կոլտնտեսությունները նույնպես ղեկավարվում են համապետական սոցիալիստական պլանով:

Պետական, այսինքն՝ համաժողովրդական և կոոպերատիվ-կոլտնտեսային սեփականության միջև յեղած վոչ միայն ընդհանուրը, այլև տարբերությունները հասկանալու համար պետք է դիտել թե պատմականորեն ինչպես է առաջ յեկել կոոպերատիվ-կոլտնտեսային սեփականությունը. այլապես կարելի յե տարվել անհիմն իմաստակությունը:

Վերևում արդեն խոսեցինք այն յերկար ու դժվարին ուղու մասին, վորով բանվոր դասակարգը գյուղացիությունը մոտեցրեց կոլեկտիվացմանը:

Կոոպերատիվ-կոլտնտեսային սեփականությունն առաջ յեկավ գյուղացիության կոոպերացման ուղիով: Կուսակցությունն աստիճանաբար գյուղացիներին մոտեցնում էր այդ կոոպերացմանը, արտադրական արտեսների ստեղծմանը, ձգտելով գյուղացիներին սոցիալիզմի մոտեցնել յուրաքանչյուր գյուղացու համար ամենից ավելի հեշտ, նրանց համար ամենից ավելի մատչելի ու ամենից ավելի հասկանալի ուղիով:

Կոոպերատիվ-կոլտնտեսային սեփականությունը յերևան յեկավ այն բանի հետևանքով, վոր առանձին աշխատավոր-գյուղացիները — միջակներն ու չքավորները, իրենց արտադրության միջոցները համախմբելով կոլտնտեսություններում, այնուհետև պետությունից ձեռք բերին արտադրության նոր միջոցներ, վորպեսզի գործեն համատեղ, վորպեսզի համատեղ կառուցեն հանրային, սոցիալիստական խոշոր տնտեսություն:

Պատմականորեն այսպես և տեղի ունեցել սեփականութեան կոտորածի-կոտորածային սոցիալիստական ձևի առաջացումը: Վոչ մի դեպքում չի կարելի աչքաթող անել այդ պատմական ուղին, քանի վոր այդ հանգամանքը հաճախ հասցնում է թեթևաժիտ հետևությունների ու ֆլուսակար հետևանքներին: յերբեմն առաջ եր գալիս «սովխոզացման» տեսությունը, յերբ մարդիկ սկսում են կոտորածությունները վերափոխել խորհրդատեսությունների, իսկ յերբեմն ել սկսում են ազելի կողմնակի, բայց վոչ պահաս վտանգավոր ուղիով՝ իբր թե կոտորածություններին ոգնելու նպատակով՝ առանձին կոտորածություններն ամբողջել խորհրդատեսություններին, դրանով իսկ խանգարելով կոտորածությունների ճիշտ զարգացումը և նրանց իսկական ու հաստատ ամբողջումը, յերբեմն տեղի յեն ունենում գյուղատնտեսական արտելի ստալինյան կանոնադրության կոպիտ, թեթևաժիտ խախտումներ:

Մինչդեռ չի կարելի մոռանալ, վոր այն ժամանակ, յերբ համաժողովրդական սեփականության լիակատար տերն է հանդիսանում Խորհրդային պետությունը, վորը ներկայացնում է ամբողջ հասարակության շահերը, — կոտորածությունների ձեռքում գտնվող արտադրության միջոցների տերն իրենք կոտորածականներն են: Այդ բանը մեզ մոտ գրի յե առնված, սահմանված, արձանագրված վճռական որոշումների մեջ, վորոնց մասին վոչ մի դեպքում չի կարելի մոռանալ: Պետական սեփականության և կոտորածի-կոտորածային սեփականության միջև յեղած այդ տարբերությունը գրի յե առնված կուսակցական ու խորհրդային համագործակցության վորոշումների մեջ և այդ պետք է մշտապես նկատի ունենալ:

Կոտորածականներն իրենք են տնորինում արտադրության կոտորածային միջոցները: Ճիշտ է, պետությունն ոգնում է նրանց ազելի ու ազելի մեծ չափով: Պետությունը գյուղում կազմակերպել է մեքենատրակտորային կայանների ցանց, նա վորոշ վճարով կոտորածություններին ոգտագործելու համար տրամադրում է կոմբայններ, տրամագործ է տրակտորներ, տրակտորային գունթաններ և այլն: Այստեղ վորոշ պայմանագրային հարաբերություններ են սահմանվում կոտորածության տիրոջ — կոտորածականների և պետական կազմակերպության — մեքենատրակտորային կայանների միջև, իսկ ինչ վերաբերում է արտադրության մյուս միջոցներին, վորոնք կան կոտորածություններում, ապա դրանց լիիշխան տերն է ինքը՝ կոտորածությունը:

Սա չափազանց եյական տարբերություն է, վորը հետագա-

յում տարբերություն է հասցնում նաև աշխատանքի կազմակերպման ու կառավարման կազմակերպման բնագավառում, և տարբերություն՝ կոտորածականների ու բանվորների յեկամուտներին ստացման միջև:

Պետական ձեռնարկություններում աշխատանքի կազմակերպումը վորոշվում է պետական մարմինների կողմից, իհարկե, բոլոր բանվորների ոժանդակությամբ, նրանց կազմակերպությունների ոգնությամբ, նրանց ազելի մասնակցությամբ:

Իսկ ինչպես է դրությունը կոտորածում են կոտորածականներն աշխատանքի կազմակերպումը վորոշում են կոտորածականներն իրենք, գյուղատնտեսական արտելի որինակելի կանոնադրության հիման վրա — կանոնադրություն, վորը բոլոր կոտորածականների կողմից ընդունված է և ընդունվում է կամավոր կերպով: Այս մոտմենտը չափազանց եյական է:

Այնուհետև, պետական ձեռնարկության մեջ ամբողջ արտադրանքը պետության սեփականությունն է:

Իսկ ինչպես է դրությունը կոտորածություններում: Կոտորածություններում, դուրս յեկած այն պարտավորությունները, վոր կոտորածությունները կատարում են պետության հանդեպ, վոր կոտորածությունները կատարում են պետության հանդեպ, կոտորածությունների ամբողջ արտադրանքը կոտորածականների — սովյակ ձեռնարկության տերերին — սեփականությունն է հանդիսանում:

Բանվորն իր յեկամուտն ստանում է աշխատավարձի ձևով՝ համաժողովրդական ֆոնդից, ըստ վորում այդ ֆոնդը վորոշվում է հատուկ յեղանակով և յուրաքանչյուր ձեռնարկություն այն ստանում է տնտեսական հաշվարկի հիմունքներով:

Կոտորածականն իր յեկամուտն ստանում է անմիջականորեն իր կոտորածության յեկամուտից, ըստ աշխուրի — այսինքն՝ բաշխման սոցիալիստական սկզբունքի հիման վրա, բայց նա այն ստանում է իր կոտորածության յեկամուտից:

Այնուհետև, ի գիտություն և պետական ձեռնարկությունների նում են կոտորածությունների և պետական ձեռնարկությունների միջև յեղած տարբերությունները և ովքեր ցանկանում են գործն այնպես պատկերացնել, վոր մեզ մոտ արդեն լիովին ու ամբողջությամբ վերացված են բոլոր տեսակի դասակարգային տարբերությունները, պետք է հիշեցնել մի եյական հանգամանք, վոր յերբեմն մոռանում են տնտեսագետներն ու թեորետիկները:

Այդ այն հարցն է, վոր կոտորածականները վաճառում են իրենց արտադրանքը: Պետության հանդեպ ունեցած իր պարտա-

վորությունները կատարելուց հետո կոլտնտեսությունը հնարավորություն ունի վաճառելու և վաճառահանելու իր արտադրանքը: Նա իրավունք ունի իր արտադրանքը հանել շուկա ու վաճառել: Յեւ վճի միայն կոլտնտեսություններն ամբողջությամբ, այլ նաև կոլտնտեսականներն իրենք կոլտնտեսությունում ստացած իրենց բաժնից հնարավորություն ու իրավունք ունեն, համապետական պարտավորությունները կատարելուց հետո, գյուղատնտեսական միջերջները շուկա հանել և վաճառել:

Այս մասին մենք չենք կարող և չպետք է մոռանանք: Մենք չպետք է մոռանանք նաև այն, վոր կոլտնտեսականները հանրային տնտեսությանը զուգընթաց, իրենց ոգտագործման տակ ունեն, գյուղատնտեսական արտելի կանոնադրությամբ նախատեսված չափով, տնամերձ հողամաս, ունեն իրենց՝ վոչ մեծ չափով՝ անձնական ինվենտարը, վորպես սեփականություն ունեն կով, վոչխար, թռչուններ և այլն:

Ճիշտ տեսելու համար հեռանկարը, ճիշտ կառուցելու համար քաղաքականությունը, հասկանալու համար, թե մենք դասակարգերի վերացման վոր աստիճանին ենք հասել, մենք պետք է տեսնենք սոցիալիստական սեփականության յերկու ձևերի մատնանշված տարբերությունները, վորովհետև այդ տարբերությունները հակայական նշանակություն ունեն մեր ամբողջ շինարարության մեջ:

Մենք վճռական քայլեր ենք կատարել դասակարգերի վորնչացման գործում: Բանվորներն ու գյուղացիները մեր յերկրում դարձել են աշխատավորներ, վորոնք աշխատում են սոցիալիստական ձեռնարկություններում, վորոնք վարձատրվում են բաշխման սոցիալիստական սկզբունքի հիման վրա, բայց նրանց միջև դեռ պահպանվել են դասակարգային տարբերությունների մնացորդներ: Իսկապես այն տարբերությունների այդ մնացորդները կապված են սոցիալիստական սեփականության այն ձևերի տարբերության հետ, վոր մենք ունենք կոլտնտեսություններում և պետական ձեռնարկություններում: Իրանք կապված են նաև աշխատանքի այն կազմակերպման հետ, վոր մենք ունենք այնտեղ և այստեղ: Վերջապես, դրանք կապված են նաև բանվոր դասակարգի ու կոլտնտեսականների գիտակցության, կարգապահության ու կուլտուրականության տարբեր մակարդակի հետ:

Իհարկե, արտելը միշտ արտել չի մնա: Իհարկե, արտելը, ինչպես ասում էր ընկեր Ստալինը կուսակցության 17-րդ համագումարում, կվերածի կոմունայի: Բայց այն ընկերներին, ովքեր

ներկայումս այնպես են դատում, թե բոլոր սահմանները կուլտնտեսությունների և պետական ձեռնարկությունների միջև այժմ արդեն համարյա լիովին ու ամբողջությամբ ջնջվել են, պետք է խորհուրդ տալ կրկին ու կրկին անգամ կարգալ կուսակցության 17-րդ համագումարում ընկեր Ստալինի ունեցած յերույթի այն տեղը, վորի մեջ խոսվում է գյուղատնտեսական արտելի ու կոմունայի տարբերության մասին: Այն ընկերները, ովքեր չեն համբերում, ովքեր ցանկանում են ավելի արագ կերպով, ամեն տեսակի արհեստական միջոցներով, կոլտնտեսությունները վերածել հետևողականորեն-սոցիալիստական ձեռնարկությունների, պետք է կարգան ու կրկին անգամ կարգան կուսակցության 17-րդ համագումարում ընկեր Ստալինի՝ արտասանած ճառի այդ տեղերը, վորովհետև դրանք այժմ վճռողական նշանակություն ունեն:

Ընկեր Ստալինը կուսակցության 17-րդ համագումարում կոմունաների մասին ասում էր, թե՝

«...կոմունան պետք է, և նա, իհարկե, կոլտնտեսային շարժման բարձրագույն ձևն է, բայց վոչ այժմյան կոմունան, վորն առաջացել է անգորգացած տեխնիկայի և մթերքների պակասության բաղայի վրա և վորն ինքն է անցնում արտելի դրությանը—այլ ապագա կոմունան, վորն առաջ է գալու ավելի զարգացած տեխնիկայի ու մթերքների առատության բաղայի վրա: Այժմյան գյուղատնտեսական կոմունան ծագել է քիչ զարգացած տեխնիկայի ու մթերքների պակասության հիմքի վրա: Իրանով էլ հենց բացատրվում է, վոր նա հավասարեցում էր գործադրում և քիչ երհաշվի առնում իր անդամների անձնական, կենցաղային շահերը, ուստի և նա այժմ հարկադրված է արտելի դրության անցնելու, վորտեղ խելացիորեն զուգակցվում են կոլտնտեսականների անձնական ու հասարակական շահերը: Ապագա կոմունան կաճի զարգացած և ունևոր արտելից: Ապագա գյուղատնտեսական կոմունան կձագի այն ժամանակ, յերբ գյուղատնտեսական կոմունան հացահատիկի, անարտելի դաշտերում ու ֆերմաներում հացահատիկի, անասունների, թռչունների, կլինի, յերբ արտելներին կից մթերքների առատություն կլինի, յերբ արտելներին կից կհիմնվեն մեքենայացված լվացքատներ, արդիական խոհանոց-ճաշարաններ, հացի գործարաններ և այլն, յերբ կոլտնտեսականը կտեսնի, վոր նրան ավելի ձեռնտու է յե միսն ու կաթը ֆերմայից ստանալ, քան սեփական կով ու մանր

անասուն պահել, յերբ կոլտնտեսուհին կտեսնի, վոր իրեն ավելի ձեռնտու յե ճաշարանում ճաշել, հացի գործարանից հաց վերցնել և հանրային լվացքատնից ստանալ լվացած սպիտակեղենը, քան անձամբ զբաղվել այդ գործով: Ապագայի կոմունան կծագի ավելի զարգացած արտելի բաղայի վրա, մթերքների առատութեան բաղայի վրա: Յերբ կլինի այդ: Իհարկե, վոչ շուտով: Բայց այդ կլինի: Հանցագործութեան կլինեն արհեստականորեն արագացնել արտելն ապագա կոմունայի վերածելու պրոցեսը: Այդ կխառներ բոլոր խաղաթղթերը և կհեշտացնեն մեր թշնամիների գործը: Արտելն ապագա կոմունայի վերածելու պրոցեսը պետք է տեղի ունենա աստիճանաբար, վորչափով բոլոր կոլտնտեսականները կհամոզվեն, թե այդպիսի վերահումն անհրաժեշտ է:

Սոցիալիստական սեփականութեան կոլտնտեսային ձևի և մեր պետական ձեռնարկութեանների հետևողականորեն-սոցիալիստական սեփականութեան ձևի միջև յեղած տարբերութեան, աշխատանքի արտադրողականութեան աճմանը և տեխնիկայի աճմանը զուգընթաց, աստիճանաբար կջնջվի, բայց այդ տարբերութեան լիակատար վոչնչացումն, ըստ յերևութի, ձեռք կբերվի միայն լիակատար կոմունիզմի ժամանակ:

Յե՛վ ահա, յերբ մենք խոսում ենք մեր յերկրում դասակարգերի վոչնչացման մասին, մենք պետք է նկատի ունենանք այս բոլոր հանգամանքները, դասակարգերի վոչնչացման ներկայումս ձեռք բերված աստիճանի բարդութեանն ու յուրահատկութեանը:

Հազիվ թե արժի առանձնապես կանգ առնել ինտելիգենցիայի հարցի վրա, քանի վոր այդ հարցն այժմ պարզ է: Վոր մենք ամենահսկայական տեղաշարժեր ունենք մեր խորհրդային ինտելիգենցիայի մեջ, այդ մասին է վկայում, որինակ, ինժեներ-տեխնիկական աշխատողների կանանց՝ որերս Կրեմլում տեղի ունեցած խորհրդակցութեանը: Այդ խորհրդակցութեանը վերին աստիճանի ցուցանչական է: Նա վկայում է այն մասին, վոր նույնիսկ բուրժուական հին ինտելիգենցիան, վորն անցյալում սերտորեն կապված էր արդուներակա ու բանկային կապիտալի հետ, վորը յերկար ժամանակ չէր ճանաչում խորհրդային իշխանութեանը, վորը մի շարք դեպքերում համառորեն պայքարում էր պրոլետարիատի դիկտատուրայի դեմ, սոցիալիզմի դեմ, իսկ մասամբ խառն էր ամեն տեսակի փաստարարական կազմակերպութեանների, ներկայումս իր հիմնական մասսայով ամուր ու հաստատապես անցել է

խորհրդային իշխանութեան կողմը: Սոցիալիզմի կողմն են կանգնել զոչ միայն իրենք՝ ինժեներ-տեխնիկական աշխատողները, այլև նրանց կյանքի ընկերուհիները, աշխատանքի ընկերները:

Այդ, իհարկե, սոցիալիզմի վիթխարի հաղթանակն է: Սա վերկայում է այն մասին, վոր ինտելիգենցիան դարձել է մեր խորհրդային հասարակութեան ճիշտ նույնպիսի իրավահավասար խավը, վոր ինտելիգենտները ևս մեր Խորհրդային պետութեան իրավահավասար քաղաքացիներն են:

Պետք է նաև նկատի ունենալ, վոր յերբ մենք խոսում ենք խորհրդային ինտելիգենցիայի մասին, պետք է հաշվի առնենք, վոր վերջին ժամանակներս տեղի յե ունեցել զոչ միայն տեխնիկական հին ինտելիգենցիայի շրջադարձ դեպի սոցիալիզմը, այլ տեղի յե ունենում նաև նոր, խորհրդային, յերթասարդ, բանավոր դասակարգի շարքերից դուրս յեկած ինտելիգենցիայի հսկայական աճման պրոցես:

Այդ յերևում է այժմ յուրաքանչյուր գործարանում: Ահա Ստալինի անվան գործարանը (նախկին ԱՄՈ-ն): Այստեղ 968 ինժեներ կա, դրանցից մինչև հեղափոխութեանը վորպես ինժեներ աշխատել են 61 հոգի, իսկ խորհրդային ֆորմացիայի ինժեներներ, ինժեներներ, վորոնք բարձրագույն ուսումնական հաստատութեանները խորհրդային իշխանութեան ուրով են ավարտել, հետևաբար վորպես ինժեներներ չեն աշխատել կապիտալիստական ձեռնարկութեաններում, — 907 հոգի:

Վերցնենք «Կրասնի բոգատիր» գործարանը: Այստեղ աշխատում են ընդամենը 81 ինժեներ, դրանցից մինչև հեղափոխութեանը վորպես ինժեներ աշխատանքները կազմում են 12 հոգի, խորհրդային ֆորմացիայի ինժեներները՝ 69 հոգի:

Ահա Տրյոխգորնայա մանուֆակտուրան: Այստեղ աշխատում են 50 ինժեներ, դրանցից մինչև հեղափոխութեանը վորպես ինժեներ աշխատել է մեկ հոգի, իսկ խորհրդային ֆորմացիայի ինժեներները կազմում են 49 հոգի: Տեխնիկներ (իսկ տեխնիկները խոշոր նշանակութեան ունեն) կազմում են 115 հոգի, դրանցից նախքան հեղափոխութեանը աշխատողները՝ 25 հոգի, նորերը՝ 90 հոգի:

Այսպիսով, նոր կազմեր դաստիարակելու ուղղութեամբ մեր կուսակցութեան կատարած հսկայական աշխատանքի շնորհիվ եկուսակցութեան կատարվել խորհրդային ինտելիգենցիայական փոփոխութեան և կատարվել խորհրդային ինտելիգենցիայի կազմի մեջ: Դուրս է գալիս, վոր մենք այստեղ զգալի չափով գործ ունենք խորհրդային իշխանութեան տարիներին դաստիար

բակված սերունդները հետ: Այժմ ինտելիգենցիան կազմված է աշխարհի մարդկանցից, վորոնք հաստատուն կերպով կանգնած են խորհրդային իշխանութիւնի պիտոյի վրայ, վորոնք աշխատում են խորհրդային պետութիւնի ոգտին և սոցիալիզմի ոգտին՝ վոչ թէ անից դրդված, այլ իւրի մտքը, վորոնք հաճախ հարվածային աշխատանքի որինակներ են ցույց տալիս, հերոսութիւն օրինակներ, և խորհրդային կառավարութիւնի կողմից պարգևատրված են շքանշաններով—գերազանցութիւնի աշխատանքներով, վորոնք գոյութիւն ունեն մեր յերկրում:

Մինչդեռ անցյալում ինտելիգենցիան սպասարկում էր տիրապետող դասակարգերին, նրանց պետութիւնը, նոր, խորհրդային ինտելիգենցիան բանվորների ու գյուղացիների հետ միասին սոցիալիզմ է կառուցում:

Նա մեր խորհրդային հասարակութիւնի իրավահավասար մասն է հանդիսանում:

* * *

Յեւ այսպէս, ԽՍՀՄ-ում վճռական քայլեր են արված դասակարգերի վերացման գործում, բայց պետք է նկատի ունենալ, վոր մեզ անհրաժեշտ է դեռ շատ ու շատ աշխատել դասակարգերի վոչնչացման պրոցեսն ավարտելու համար: Իսկ ինչ է նշանակում դասակարգերի վերջնական վոչնչացման պրոցեսը: Այդ մասին Լենինը խոսում է իր «Մեծ նախաձեռնութիւն» հոդվածի մեջ.

«Պարզ է, վոր դասակարգերի լիակատար վոչնչացման համար պետք է վոչ միայն տապալել շահագործողներին, կալվածատերերին և կապիտալիստներին, վոչ միայն վերացնել նրանց սեփականութիւնը, այլ պետք է վերացնել նաև արտադրութիւնի միջոցների ամեն մի մասնավոր սեփականութիւնը, պետք է վոչնչացնել ինչպէս քաղաքի և գյուղի միջև յեղած տարբերութիւնը, այնպէս ել ֆիզիկական աշխատանքի մարդկանց և մտավոր աշխատանքի մարդկանց միջև յեղած տարբերութիւնը»:

Ահա թէ ինչ է նշանակում դասակարգերի լիակատար վոչնչացումը՝ ըստ Լենինի: Դասակարգերի լիակատար վոչնչացումը,— ասում է Լենինը,— զատ յերկարատև գործ է: Այդ կատարելու համար հսկայական քայլ է հարկավոր դեպի առաջ արտադրողական ուժերի զարգացման գործում, հարկավոր է հաղթահարել մանր

արտադրութիւնի բազմաթիւ մնացորդները դիմադրութիւնը (հաճախ պասսիւ, վորն առանձնապէս համառ է և առանձնապէս դժվար է հաղթահարվում), պետք է հաղթահարել այդ մնացորդները հետ կապված սովորութիւն և անշարժութիւն անազին ուժով»:

Լենինի այս ցուցումները լույսի տակ լուծվում է նաև դասակարգային կովի հարցը մեր յերկրում: Այն ընկերները, ովքեր մետաֆիզիկորեն, գեղեկացված ձևով են մոտենում ԽՍՀՄ-ում դասակարգերի վերացման հարցին, նույնչափ գեղեկացված ձևով ու մետաֆիզիկորեն են դնում նաև դասակարգային պայքարի հարցը ԽՍՀՄ-ում: Նրանք ասում են. քանի վոր ԽՍՀՄ-ում դասակարգերը վերացված են, նշանակում է ԽՍՀՄ-ում այլևս չկա դասակարգ, գային կով: Մի խոսքով, այդ ընկերներն այնպէս են դատում, ինչպէս այն սպորտուսուսները, վորոնց մասին ընկեր Ստալինն ասում էր, թէ նրանք հորթի հրճված են զգում և յենթադրում ասում էր, թէ անդասակարգ հասարակութիւնի գալստյան սպասելով կան, թէ անդասակարգ հասարակութիւնի գալստյան սպասելով կան, թէ անդասակարգ հասարակութիւնի հանգստանալ, հրաժարվել զգաստութիւնից:

Վոչ, մեր յերկրում հաղթանակած սոցիալիզմն ամրապնդելու համար մղվող պայքարում դեռ դժվարութիւններ կան մեր առաջ: Մեր առաջ դեռ կա մեծ պայքար, վորը կլինի դասակարգային պայքար, թեև այլ ձևերով, քան անցյալում:

Այստեղից ել հետևում է բանվոր դասակարգի առաջավոր ավանգարդային դերի հարցի լուծումը: Այն, հիմնական սահմաններ, արմատական տարբերութիւններ բանվոր դասակարգի և գյուղացիութիւնի միջև գոյութիւնը ունեն,— նրանք ջնջվել են: Բայց բանվոր դասակարգն այժմ ել ամենից ավելի առաջավոր, քաղաքականապէս ամենից ավելի գիտակից, կուլտուրապէս ամենից ավելի զարգացած ուժ է ներկայացնում մեր խորհրդային պետութիւնի մեջ: Այդ մոտանալը հանցագործութիւն կլինի: Բայց վական է հիշեցնել միայն մի բան — ստալանովյան շարժումը — կարգի ունեցած դեկավար դերի ամբողջ ուժը, ամբողջ մեծութիւնը: Այդ դերն այժմ ել վիթխարի նշանակութիւն ունի: Բանվոր դասակարգն այդ դերն իրականացնում է ել ավելի մեծ մասշտաբով, ել ավելի մեծ ծավալով և ել ավելի մեծ ուժով, քան յերեկից անցյալում: Բանվոր դասակարգն այժմ ել իրեն հանդես բերցնում ամբողջ առաջավոր. նա իր հետևից է տանում աշխատավորները վորպէս առաջավոր. նա իր հետևից է տանում վճռողական նշանա-մնացած բոլոր խավերին մեզ համար առավել վճռողական նշանակութիւն ունեցող հարցում—աշխատանքի բարձր արտադրողա-

կանոնաթիւն համար մղվող պայքարում, սոցիալիզմի վերջնական հաղթանակի համար մղվող պայքարում: Բանվոր դասակարգն իր հետևից ե տանում աշխատավորներին հասարակական նոր կարգ-
դասակարգութուն ստեղծելու գործում, առանց վորի, հասկանալի յե, անհնարին ե ստեղծել աշխատանքի բարձր արտադրողականութուն:

Ուստի և բնական ե, վոր մեր բոլշևիկյան կուսակցութունն ել հանդիսանում ե և կհանդիսանա,—վորքան միայն մենք կարող ենք տեսնել մեր առաջ—բանվոր դասակարգի ավանգարդը, նրա մարտական ղեկավար կազմակերպութունը, վորն ընդգրկում ե իր մեջ և համախմբում ե վնչ միայն այն լավագույնը, վոր կա բանվոր դասակարգի շարքերում, այլ և այն լավագույնը, վոր կա աշխատավորութեան մյուս խավերի մեջ: Նա ներգրավում և կազմակերպում ե բանվոր դասակարգի ու աշխատավորութեան մյուս խավերի միջից դուրս յեկած լավագույն մարդկանց՝ աշխատավորութեանը ղեկի կոմունիզմի լիակատար հաղթութունը տանելու համար: Մոռանալ այդ, լութեան մասնել այդ, աչքաթող անել այդ հարցը՝ նույնպես հանցագործութուն կլիներ:

Մենք պետք ե խոսենք նաև մեր պետութեան մասին, այն մասին, վոր առաջիկա շրջանում պետք ե գործի և ամրապնդվի սոցիալիստական, Սորհրդային պետութունը:

Շատերը հարց են տալիս, թե ինչ բնույթ ունի այդ պետութունը և նա անհրաժեշտ ե արդյոք այն հասարակութեան մեջ, վորտեղ վերացվում են դասակարգերը: Իհարկե, մեր պետութեան բնույթը վորոշ չափով փոխվել ե, վորովհետև մեր պետութունը ներկայումս հանդիսանում ե իսկապես համաժողովրդական պետութուն, և այդ կարտացոլվի Սորհրդային միութեան նոր Սահմանադրութեան մեջ:

Մեր յերկրում հսկայական փոփոխութուններ են կատարվել: Այդ փոփոխութունների հետևանքով ներկայումս անհրաժեշտութուն չկա—այնքան, վորքան չկան շահագործող դասակարգեր—հետագայում ևս կիրառելու այն սահմանափակումները, վոր այդ դասակարգերի վերաբերմամբ մտցված եյին նախորդ սահմանադրութուններով: Մենք կարող ենք անցնել և անցնում ենք ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի՝ գաղտնի քվեարկութեամբ:

Նկատի ունենալով, վոր գյուղացիները ներկայումս դարձել են կոլտնտեսականներ, իսկ բանվոր դասակարգի դաշինքը գյուղացիութեան հետ ել ավելի յե ամրապնդվել, դարձել ե միան-

գամայն անխորտակելի, մենք կարող ենք այժմ վերացնել այն առավելութունները, վորոնցով խորհուրդները ընտրութունները ժամանակ Սահմանադրութեան համաձայն ոգտվում եր բանվոր դասակարգը գյուղացիների համեմատութեամբ: Ընտրական իրավունքը կլինի հավասար և ընդհանուր, այդ բառի լիակատար իմաստով:

Բայց քնասակար դատարկաբանութուն կլիներ սոցիալիստական պետութեան վերաբերմամբ ասել, թե այստեղ վերջ ե տրվել բանվոր դասակարգի ղեկավար գերին:

Բանվոր դասակարգը նոր Սահմանադրութեան որով ել կունենա իր ղեկավար գերը: Բայց այդ գերը կիրականացվի այլ յեղանակներով.—վնչ թե ձևական որինքի միջոցով, վորն ապահովում և ամրապնդում ե բանվոր դասակարգի առավելութունները, այլ շնորհիվ այն մեծագույն վստահութեան, վոր բանվոր դասակարգը նվաճել ե աշխատավորութեան բոլոր խավերի մեջ:

Յերբ մենք խոսում ենք այն մասին, թե ինչպիսին կլինի այժմ բանվոր դասակարգի գերը, ինչպիսին կլինի պրոլետարիատի ղեկատարության գերը, ապա պետք ե հիշեցնել Լենինի խոսքերը, վորոնք հսկայական նշանակութուն ունեն:

«Պրոլետարիատի ղեկատարան,—ասում ե Լենինը,— յեթե թարգմանենք այս լատիներեն, գիտական, պատմափիլիսոփայական արտահայտութունն ավելի հասարակ լեզվով, նշանակում ե ահա թե ինչ»:

միայն վորոշ դասակարգ, այն ե՝ քաղաքային և առհասարակ Փաբլիկ-գործարանային, արդյունաբերական բանվորները, ի վիճակի յե ղեկավարելու աշխատավորների և շահագործվողների ամբողջ մասսան կապիտալի լծի տապալման համար մղված պայքարում, բուն իսկ տապալման ընթացքում, հաղթութեան պահպանման և ամրապնդման համար մղված պայքարում, նոր, սոցիալիստական կարգերի ստեղծման գործում, դասակարգերի լիակատար վոչնչացման համար մղված ամբողջ պայքարում»*:

Հասկանալի յե, վոր պրոլետարիատի ղեկատարան նույնը չի մնում սոցիալիստական շինարարութեան տարբեր աստիճաններում: Փոխելով հասարակութունը, վերափոխելով հասարակական հարաբերութունները՝ նա ինքն ել փոխվում ե:

* Լենին, Յերկեր, հատոր XXIV, էջ 336:

Ընկեր Ստալինը պրոլետարիատի ղեկավարության ձևերի ու մեթոդների մասին ասում է.

«Պրոլետարիատի ղեկավարության ունի իր ժամանակաշրջանները, իր հատուկ ձևերը, աշխատանքի բաղմադրան մեթոդները: Քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում առանձնապես աչքի յե զարկում ղեկավարության բուն կողմը: Բայց դրանից բնավ չի հետևում, Վոր քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում վոչ մի շինարարական աշխատանք տեղի չի ունենում: Առանց շինարարական աշխատանքի քաղաքացիական պատերազմ մղել անհնարին է: Սոցիալիզմի շինարարության ժամանակաշրջանում, ընդհակառակը, առանձնապես աչքի յե զարկում ղեկավարության խաղաղ, կազմակերպչական, կուլտուրական աշխատանքը, հեղափոխական օրինականությունը և այլն: Բայց դրանից դարձյալ բնավ չի հետևում, Վոր ղեկավարության բուն կողմը շինարարության ժամանակաշրջանում մեջտեղից վերացել է կամ կարող է վերանալ: Ծնշման օրգանները, բանակը և մյուս կազմակերպություններն անհրաժեշտ են հիմա շինարարության մոմենտում նույնպես, ինչպես քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում: Առանց այդ օրգանների առկայության՝ անհնարին է ղեկավարության վորևե չափով ապահովված շինարարական աշխատանքը: Հարկավոր չե մուռանալ, Վոր հեղափոխությունը հաղթել է առայժմ ընդամենը միայն մի յերկրում»*:

Մեր յերկրում կան դասակարգային թշնամիների բեկորներ, ֆասցորդներ: Նրանց դեմ պրոլետարիատի ղեկավարության գործում է և կգործի ամբողջ ուժով, ամենայն խստություն և ամենայն անողորմություն: Բայց, իհարկե, այդ արդեն այն չե, ինչ մենք ունեյինք մի քանի տարի առաջ և հեղափոխության հենց սկզբում, յերբ պրոլետարիատի ղեկավարության ամենագլխավոր խնդիրն եր հենց բռնությունը, հենց շահագործողների տապալված գասակարգի ճնշումը, նրանց ղեկավարության ճնշումը, պրոլետարիատի տիրապետությունը բուրժուազիայի նկատմամբ: Այժմ մեր յերկրում շահագործող դասակարգերը վոչնչացված են:

Այժմ առաջին պլանի վրա յե քաշվում այլ խնդիր—դաստիարակչական խնդիրը, աշխատավորության բոլոր խավերի ղեկավարման խնդիրն եկոնոմիկայի և մարդկանց գիտակցություն միջից

կապիտալիզմի ֆասցուկների լիակատար վոչնչացման համար մղվող պայքարում, մարդկանց սոցիալիստական վերադաստիարակություն և դասակարգերի ու բոլոր դասակարգային տարբերությունների վերացումը մինչև վերջ հասցնելու համար մղվող պայքարում:

Յեղ այդ իմաստով, ղեկավարման իմաստով, մենք կարող ենք ասել, Վոր պրոլետարիատի ղեկավարության ֆուում է: Պրոլետարիատն իր հետևից է տանում աշխատավոր մասսաներին, ղեկավարում է աշխատավորության մյուս խավերին և կղեկավարի հետագայում Խորհրդային նոր Սահմանադրության սահմաններում ու շրջանակներում, զարգացման նոր աստիճանի վրա, սոցիալիստական հասարակության շրջանակներում, յերբ անհրաժեշտ է ջնջել այն բնածին խալերը, վորոնք ֆասցել են կապիտալիզմից:

Դասակարգային կոիվը մեր յերկրում չի վերանում: Աշխատավոր մասսաների սոցիալիստական վերադաստիարակությունը նույնպես դասակարգային պայքարի առանձնահատուկ մի ձև է: Հանրային սեփականության ամրապնդման ու պահպանման համար մղվող պայքարը դասակարգային կոիվ է, հասարակական կարգապահության ամրապնդման համար մղվող պայքարը դասակարգային կոիվի հատուկ ձև է:

Ճիշտ է, այստեղ մենք գործում ենք վոչ միայն հարկադրման մեթոդներով, այլև համոզելու մեթոդներով, բայց դա նմանապես դասակարգային կոիվ է հին հասարակության ուժերի, սովորությունների ու տրագիքիաների դեմ:

Այդ բանը հարկավոր է պարզ կերպով տեսնել, հարկավոր է պարզ կերպով աչքի առաջ ունենալ, ներկայիս իրադրության յուրահատկությունն ըմբոնելու համար:

Պետությունը մեղ հարկավոր է նաև սոցիալիզմի ժամանակ: Նա հարկավոր է հանրային սոցիալիստական սեփականությունը պահպանելու համար, վորը Խորհրդային հասարակակարգի հիմքն է: Այդ պետությունը հարկավոր է մեղ՝ «ամեն մեկն ըստ իր ընե»: Այդ պետությունը հարկավոր է, ամեն մեկին ըստ իր աշխատանքի» սոցիալիստական սկզբունքը պահպանելու, իրականացնելու և դրա կիստական սկզբունքը պահպանելու, իրականացնելու համար: Մեղ պետությունը հարկավոր է հասարակական, սոցիալիստական նոր կարգապահություն, պարտքի զգացում, աշխատանքի նկատմամբ ազնիվ վերաբերմունք դաստիարակելու և ամրապնդելու համար: Առանց դրան մենք չենք կարող սոցիալիզմ ստեղծել:

Մարդկանց դաստիարակելով սոցիալիզմի վոգով՝ մենք գոր-

* Ստալին, «Լենինի գործի հարցերը», էջ 147, Հայկուհրատ, 1935 թ.:

ծում ենք համոզելու մեթոդներով, մենք գործում ենք առաջավոր-
ներին, բանվոր դասակարգի առավել գիտակից ներկայացուցիչ-
ներին, նրա պետական մարդկանց յուրաքանչյուր միջոցով, վորոնք
իրենց հետևից են տանում մնացած մասսան:

Բայց մենք այստեղ պետք է գործենք նաև խորհրդային պե-
տության հեղինակությունը, մենք պետք է գործենք սոցիալիս-
տական իրավունքի նորմաների ոգնությունը, իրավունք, վորն
ասում է՝ հարգիր հանրային սեփականությունը, հարգիր աշխա-
տանքը, ազնիվ վերաբերմունք ունեցիր դեպի քո պարտքը և դե-
պի քո հասարակական աշխատանքը, ազնվորեն վերաբերվիր սո-
ցիալիստական պետության հանդեպ ունեցած քո պարտավորու-
թյուններին, հարգիր հասարակական կարգապահությունը, վո-
րովհետև առանց դրան մենք չենք կարող իրականացնել անցու-
մը դեպի կոմունիզմ. վորը պահանջում է գիտակցության, կարգա-
պահության նոր վերելք, կազմակերպչական ունակությունների
ու տաղանդների նոր վերելք: Իսկ այդ նորմաների հետևում կանգ-
նած է խորհրդային սոցիալիստական պետությունն իր ամբողջ
ապարատով և պետական իշխանության բոլոր ատրիբուտներով:

Խորհրդային պետությունը մեզ հարկավոր է նաև յերկրի
պաշտպանությունը, մեր կարմիր բանակն ամրացնելու համար,
յերկիրն իմպերիալիստական գիշատիչների հարձակումից պաշտ-
պանելու համար, յերկրի ներսում այդ գիշատիչների գործակալու-
թյան քայքայիչ աշխատանքն արմատից կտրելու համար:

Մեր կուսակցությունը, ղեկավարելով բանվոր դասակարգին
և բոլոր աշխատավորներին, ներկայումս վճռողական հաջողու-
թյունների յե հասել դասակարգերի վոչնչացման գործում: Բան-
վորի և կուլտնտեսականի միջև յեղած հիմնական, արմատական
տարբերությունը վոչնչացված է, բայց դասակարգային տարբե-
րությունների մնացորդները դեռ գոյություն ունեն, դասակարգե-
րի վոչնչացման պրոցեսը ներկայումս շարունակվում է: Կուսակ-
ցության անդամներից պահանջվում է գիտակցության, կարգա-
պահության, կազմակերպվածության նոր վերելք, պահանջվում է
գաստիարակչական աշխատանքի լայն ծավալում, մեծ Ստալինի
ղեկավարությունը առաջ, դեպի դասակարգերի ու դասակարգային
տարբերությունների վերջնական վոչնչացումը, դեպի լիակատար
կոմունիստական հասարակության կառուցումը գնալու համար:


«Բյուլետեն» № 11, 1936 թ.

Թարգմանեց Հ. Թուրքյան
հայերենը խմբ. Ն. Մակինց
սրբ. Լ. Արսլյան, տեխն. խմբ. Ս. Խաչատրյան

Գլավխաի լիազոր C-1081, հրատ. № 385,
տիրաժ 5000, պատ. 250, ինդեքս Ս-33
Հանձնված է արտադրության 15/ VII 1936 թ.
Ստորագրված է տպագրության 5/VIII 1936 թ.

ԳԻՆԸ 50 Կ.

Հայկուստրաի սպարան, Յերեվան, Ալլախիբեդյան № 27





ՀՀ Ազգային գրադարան



NL0201138

578

ԳԻՆԸ 50 Կ.



А. СТЕЦКИЙ
О ЛИКВИДАЦИИ КЛАССОВ В СССР

Армпаргиздат, Эривань